27
7-30

1855

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ԵՒ

ԹՈՒՂԹՔ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԲ

27
Պ-30

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

β

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՎԱՄՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՒ

ՄԵՍՐՈՎԲԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Գործարանի Մխիթարեանց

1853

53818-ah

241-42

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUA-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. Մասնիկյանի անվան

40712-68

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՄՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՒ

Մեսրովբայ Վարդապետին

Յետ ամաց հնգից վախճանի հայրապետն մեծ Ներսէսի, և յաջորդէ զաթոռ պատրիարքութեանն սուրբն Սահակ որդի մեծին Ներսէսի, և վասն զի ստուգապէս սա գողովծնուն առաքինութեան, յիրաւի ապա զհետ սորա ընթացեալ սուրբ և արդար վարսակոց հանդէպք. որ յաշխարհի գողով, և ելբև զանապատաւորս ամենայն հեզանաց հանդիսիւ ընդ կարգս աշխարհիս անցանէր, մշանջենաւոր-

ռունչ աղօթիւք հանդերձ խրոքն աշակերտելոք կատարեալ զպաշտօն բարեկարգութեանն, ալինդ ունելով զլեակս եկեղեցւոյ, կարգաւորելով միշտ պայծառապէս ըստ օրինի զսահմանադրութիւնս ըստ կանոնական հրամանի. օրինակ բարեաց զանձն տալով ամենեցուն. ոչ միայն ուսուցանել բանիւ՝ այլ և գործով կատարեալ զասացեալսն. ըստ ահարոնեան կարգին, գեղեցկազարդ փառաք երևեալ միշտ 'ի գլուխս ժողովրդեան իւրոյ. մանաւանդ առաւել ևս բարձրացեալ ճոխութեամբ շնորհաց. զի ոչ ստուերականին գոլով քահանայագործող դասակարգութեան, այլ ճշմարտութեանն յաւէտ զօրավիգն առաջնորդութեամբ վերադիտողութեան:

Եւ վասն զի ըստ զանազան յանցուածոց մերոց և խոտորնակ ընթացից՝ ընդ ծառայութեամբ անկաք զանազան տերանց և բազմադիմի հարկապահանջութեանց, զի դրաւեցաք ընդ Պարսից և ընդ Յունաց տէրու-

թեամբ , և յերկոցունց միջի տա-
տանէաք , որք կեղէին զկեանս մեր
զանազան վշտաք , վասն որոյ եղկելի
գոտաք քան զամենայն ազգս. վասն զի
որք հուպն էին՝ այլանդակք գոլով
և թշնամիք արդարութեան , ընդ
որս ոչ լինէր սիրոյ միաբանութիւն .
իսկ որք դաւանակիցքն էին հեռա-
գոյնք գոլով՝ ոչ հասանէին 'ի թի-
կունս ըստ արժանւոյն . վասն որոյ
զյոլով ծառայութիւնն Պարսից լի-
նէր ծառայել աշխարհիս Հայոց :

Եւ յայսմ վայրի լինէր հարկ
վասն խնդրոյ երկիք գնալ սրբոյն Սա-
հակայ առ Արտաշիր Պարսից արք-
քայ . և մեծարի առ 'ի նմանէն յա-
ւէտ վեհագոյն պատուով . վասն զի
յարգոյ և պատուական ցուցանէ
Աստուած զծառայս իւր առաջի
անհաւատից . և ապա աջալուրջ է-
րեսաք զբոլորն նորա կատարէր ըզ-
հայցուածս : Իսկ երբև եկն սուրբն
Սահակ և զսպարգևեալսն յԱրտաշ-
իր հաստատեաց 'ի ձեռն մերոյն
Վռամշապհոյ , սկսանէր դարձեալ
'ի նոյն հոգս եկեղեցւոյ տքնել քա-

ջութեամբ, յարդարելով բարեպաշտասէր զկանոնական կարգադրութիւնս։

Ընդ այն ժամանակս տպա և մեծն Մեսրովբ բաղում ջանս յանձին կալեալ վասն դիւռի գրիս մերոյ, զի ազատեսցուք 'ի յուհական լեզուածայր վտասածալիկ ծէնքենայնցն. մանաւանդ զի բաղում ինէր վրիպումն շահից հոգևոր գանձուց վասն այլալեզու հեղինայնց 'ի տառատպութիւն օտարատեռ սուղրբայից. վասն զի ուր ոչ լինէին մերձ սուրբն Սահակ կամ մեծն Մեսրովբ՝ ոչ կարէին իմանալ զվերծանութիւնս գրոց արբոց. և զրկեալ լինէին 'ի լուսաւոր պատուիրանացն Աստուծոյ. ունայն ունկնդրութեամբ և զուր աշխատութեամբ. վասն որոյ երանելին Մեսրովբ մեծագոյն հոգ զանձամբ արկեալ, ոչ դադարէր յամենայն տեղիս ընթանալ շրջագայութեամբ, թերևս կարասցէ գտանել հնար էլի խոին, և ոչ գտանէր։ Եկ յԱսորիս առ Դանիել ոմն գրամատիկոս, և գտա-

նայր դեգերեալ. ընթանայր յԵ-
դեսա առ Եպիփան ոմն Հարտա-
սան Հոխացեալ, և ոչինչ օգտեալ
այլ 'ի նոյն տարակոյս մնացեալ. զի
ելս իրացն լինիցի յԱստուծոյ և
ոչ 'ի մարդկանէ. որպէս հնոյն Իս-
րայելի յԱստուծոյ պարգևեալ գիր
օրինաց 'ի ձեռն Մովսիսի. և այս
մեծագոյն շնորհաց ընձեռեալ ազ-
գիս մերոյ յԱստուծոյ: Վասն որոյ
սուրբն Սահակ և մեծն Մեսրովբ
յետ բազում ունայնաջան և զրա-
վաստակ լինելոյն, յաղօթս ապա-
ւինէին, յԱստուծոյ խնդրելով զելս
իրացն: Եւ երանելին Մեսրովբ ու-
նելով ընդ ինքեան աշակերտեալս
անձինս. քառասուն խարազնազգեա-
տրս և բոկագնացս, տքնելով միշտ
աղօթիւք 'ի լերինս և 'ի փոսպարս
խնդրելով յԱստուծոյ վասն իրացս
այսոցիկ: Եւ տեսանէր սուրբն և երա-
ջանիկ վարդապետն Մեսրովբ, ոչ 'ի
քուն երազի և ոչ յարթնութենէ տե-
սիլ, այլ 'ի գործարանի սրտին թաթ
ձեռին՝ զի գրէր, որով տուեալ էրև
մեզ դպրութիւն աստուածային գրոց:

Եւ արդ եթէ մարգարէն տիրա-
գոյն ասէ զգրեալս՝ի տախտակս սրբ-
ոյ մարմնեղէնս, քան՝ի տախտակս
քարեղէնս, ապա յայտ է՝ թէ ոչ է
նուազ մերոյս գրոյ տուչութիւն,
քան զհին օրէնսն զտուեալսն՝ի
ձեռն նախամարգարէին Մովսիսի։
Եւ ապա եկեալ առ սուրբն Սահակ
մեծն Մեսրովբ բերելով ընդ ին-
քեան զպարգեւս աստուածայինս,
այսինքն զգիր մերոյ լեզուիս զոր
ընկալեալ՝ի շնորհացն Աստուծոյ.
ընդ որս յաւէտ ուրախացեալ բեր-
կրալն ցնծութեամբ՝ մեծ գոհու-
թիւն ամենազորին Աստուծոյ մա-
տուցանելով, որ ոչ անտես առնէ
զաղաչանս ծառայից իւրոց, այլ
ճշմարտութեամբ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ տէր, աղօթից նո-
ցա լսէ և կեցուցանէ զնոսա, զի
Աստուած փառաւորեալ է՝ի խոր-
հուրդս սրբոց իւրոց, և զփառա-
ւորիչս իւր փառաւորէ։ Արդարեւ
ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր,
այլ ըստ զարացոյց զողորմութիւն իւր՝ի
վերայ երկիւղածոց իւրոց, հեռի

առնելով 'ի մէնջ զխաւար ապիսուութեան մեր, և մեծ արար տէր զառնելն իւր ընդ մեզ, ըստ իւրում առատ մարդասիրութեան, դիմալով 'ի սահմանուած ձեռաց իւրոց. վասն որոյ եկայք ցնծացուք 'ի տէր, և օրհնեսցուք զբարերար փրկիչն մեր. կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ, և գոհացուք զառատ ողորմութենէ նորա։ Տուք փառս Աստուծոյ, տուք օրհնութիւն տեառն Աստուծոյ մերոյ ժողովուրդք հաւատացելոց և պաշտոնեայք պանծալի մօր մերոյ Սիոնի։ Մեծացուսցուք զբարերարութիւնն Աստուծոյ, և բարձր արասցուք զանուն նորա 'ի միասին. և գոհացարուք զբարերար Տեառնէ մերմէ, զի քաղցր է զի յաւիտեան է ողորմութիւն նորա. այժմ աչք կուրաց բացցին, և ականջք խլոց լուիցեն. այժմ երագեսցէ կաղութիւն լեզուիս մերոյ որ ոչ կարէր զխաղաղութիւն աստուծոյ բարբառել կամ զյաւիտենական ծէքածուս ծեթեւեթեն. այժմ պարզեսցին լեզուք ծանրախօսք՝

և զօրասցի սկարուԹիւն տգիտու-
ԹեաՆ մերոյ, 'ի փառս և 'ի գովու-
ԹիւՆ մարդասէրին Աստուծոյ. այ-
ժըմ՝ ոչ լեցի ասել խուժ և լսել
դուժ, այլ և ամէնն վերաձայնեա-
ցի 'ի ժողովրդենէն 'ի փառատրու-
ԹեաՆ պաշտօնէիցն. և ուՆկՆդրու-
ԹիւՆ լեցի վերծանողաց, և ծանիցէ
ռամիկն զծանրուԹիւն պատուիրա-
Նացն Աստուծոյ. և դեղջուկն գո-
վեսցէ զաքանչելարար տէրն. այժմ՝
ոչ կարօտասցի ոք Թարգմանու-
ԹեաՆ, և ոչ ընԹասցի ոք առ ոք
ԹէՆ ընԹերցիր ինձ զայս. այլ միաբա-
նեալք միաբանուԹեամբ, ՆերքինՆք
և արտաքինՆք, հեռաւՆակք և մեր-
ձակայք, 'ի փոքրունց մինչև ցմեծա-
մեծս, ամենեքեան ծանիցեն զՀրշ-
մարտուԹիւն, խմասցին զարդարու-
ԹիւՆ, փառաբանեսցեն զպարգևա-
տուն: Լուծաւ կապ բերանոյ, փա-
րատեցաւ ՆեմուԹիւն խաւարի.
սիւն ամպոյ լուսաւորէ, ստին հո-
գևոր դիւեցուցանէ, ընչընչուԹիւն
կերակրոյ 'ի ստուգուԹիւն փոխե-
ցաւ, և դառՆուԹիՆ ջուրց 'ի քաղցրու-

թե. սեղան հոգևոր պատրաստական է. բաժակ իմանալի մատուռակի. փութացարուք հաւատացեալ ժողովուրդք, եկայք ճաշեցէք, եկայք ըմպելեցարուք. ոչ սակաւ վաճառի՝ այլ ձրի պարգևի. ոչ տարակուսիւ խնդրեսցի, այլ դիւրալուր իմանի. առէք լեցարուք, առէք բերկրեցարուք, ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր, կերակրողն փառս վերառաքեցէք, զի անբաւ է մարդասիրութիւն նորա։ Վա՜շ արարչին, փառք Փրկչին, մեծութիւն մարդասիրին. գոհութիւն գովելի տէրութեանն. շնորհք շատ մարանապետին. օրհնութիւն ողորմածին. բարեբանութիւն բժշկողին. և արդ զինչ տացուք տրխտուր Տեառն ընդ ամենայնի զոր տուր մեզ. զի չեմք բաւական փոխարինել, այլ միայն զանուն տեառն կարդացուք օրհնութեամբ զօրհանապազ, զի մեծամեծ պարգևաց արժանիս տուր զմեզ, ամենաբաւականն Աստուած, փառաւորեալն յամենայնի։

Եւ իսկ և իսկ 'ի հրամանէ մե-

ծին Սահակայ Ժողովական մանկունս խոհեմամիտս արամախոհս, քաջուշեզս փափիկականդս, և դպրոցս ըստ գաւառաց գաւառաց կարգէ. ուսուցանել մեծով պնդութեամբ. և հարիւր տասն ամ էր 'ի սրբոյն Գրիգորէ յորժամ գտաւ զիր ազգիս մերոյ. և զայնչափ ժամանակս 'ի յայլազգեաց դեգերանս էին տառատանեալ, վասն որոյ առաւել փոյթ յանձին ունէին զի երագ վարժեսցին մանկունք յիւրաքանչիւր տեղիս, յորոց ընտրեցին թուով վաթսուն յաշակերտելոցն, զառաւել ուշիմս և զփափիկաձայնս և զերկարոգիս, և առաքեցին յազգս և 'ի լեզուս օտար գաւառաց, ուսանել իմաստութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն, յորոց էր մեծն Մովսէս Խորենացին, և եղբայր նորին Մամբրէ. Դաւիթ անյաղթն և Եղիշէ. Յովսէփ, Եղնակ, Արճան, Աղան, Մուշէ, և այլս բազումս որք ընդ նոսա գնացին յԱղեքսանդրիա, 'ի Բիւզանդիա, յԱթէնս և յայլ գաւառս ուսանել զիմաստասիրու-

թիւն որպէս զայլ ազգս , զի նա-
խանձ բազում էր յայնմ ժամանա-
կի ուսման ամենայն ազգաց , և ծաղ-
կեալ էր ուսումնասիրութիւն յաշ-
խարհի :

Եւ այսպէս մերքս ամենեքեան
գումարէին հանդերձէին կազմէին ,
պատրաստէին , յուզի անկանէին ,
երկայնաձիգ Ճանապարհորդէին ,
'ի ծովս ընթանային , 'ի թեւս
թեւթեւս թռչէին , յերիվարս
վայրակերտս էլանէին , զերատա-
նակս լայնալանջս ըմբռնէին , զկա-
րապանս օդատարածս յածէին ,
'ի սաստնոտ գաշտս անհատատաս
արշաւէին , զմահ քան զկեանս
միշտ ընտրէին , աներևոյթ նպա-
տակի ուշ ունէին . զորոց զկնի
բազումք յիւրաքանչիւր դարս և 'ի
ժամանակս հանդիսանային , նա-
խանձաւոր գործոց բարեաց լինելով,
'ի վաստակս և 'ի ջանս պատրաստե-
լով զանձինս , ժրանային՝ աքնէին ,
աշխատէին՝ հարցասէր լինէին ու-
սանելով , կրթելով վարժելով վաս-
տակելով , պատրաստելով զանձինս

'ի յերկս օգտակարս, և 'ի գործս շահաւէտս, ոմանք զառաւելս գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զնմանս հաւաքեալ, զուսումնականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զքերականն և զքերդողականն. ըստ գործնականն և զաեռական խմաստասիրութիւն և զմասունս նոցա որք են թուով երկոտասան: Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քան զոմանս վերհագոյնք երևէին, ոմանց զարմանալիք թուէին, ոմանց բաղձալիք լինէին, ժրութեամբ, ուշիմութեամբ, խմաստութեամբ, խոհեմութեամբ ուսումնասիրութեամբ, գիտութեամբ, բանագտակութեամբ: Ընդ ոմանս գասէին՝ քննութեամբ, զոմանս պատասխանւոյ արժանի ոչ համարէին, առ ընկերակիցս գովելիք, առ վարդապետս հաճելիք, հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք, ուսումնասէրք, ոքնասէրք, ժրասէրք, երկասէրք, և այսպէս

ջանային, արիանային, խիզախէին, զօրանային, հանդիսանային. պատ-
րաստելով, կուռելով, ժողովելով, յօդելով, բարդելով բեռինս մեծա-
մեծս և դժուարակիրս, զգրեանց բաղմութիւնս և զուսումն խմաս-
տութեան, բազմաց փիլիսոփայելս, բաղձալս, ցանկալս, հեշտալս,
սիրելս։

Եւ դային հասանէին մեծաւ ձգ-
խութիւն յաշխարհս Հայոց. վաճա-
ռականքն հոգևորք, փարթամացու-
ցիչքն եկեղեցւոյ, խրախացուցիչքն
մանկանց Սիոնի, սիրացուցիչքն
բազմախումբ ժողովրդոց, զարդա-
րիչքն հռչակահանդէս ուսանողու-
թեան, ունելով ընդ ինքեանս բե-
ռինս շահաւէտս և արդիւնարարս,
մարգարիտս գեղեցիկս և ականս պա-
տուականս, զբաղխոհականն, զա-
ռենականն, զկացրդականն և զաս-
տուածաբանականն, զարդարելով
զերկս աշխատողացն և զոյնս խմաս-
տասիրութեան պանծալս արմա-
տացուցանելով. և ծանօթ առնելով
բազմաց զգիտութիւն, զերևակայ-

Ա 7412.68

ութիւն, զմիտս, և զկարծիս և զզգայութիւն. զարհեստս և զմակացութիւն, և զայլսն ամենայն զգովելիսն և զպանծալիսն, և զկիսանիսն պատուականաց, զզատեալսն և զմեկնեալսն յանպիտանեացն։ Քանզի մեծաւ հոգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ երանելեացն զշահաւէտսն ժողովելով և զկոտանսն 'ի բաց ընդենելով։

Բայց աւաղ յայսմ վայրի, զի բանս այլ ոչ ախորժէ յառաջիկ։ Քանզի յորժամ հունձքն բազում էին և մշակք սակաւ, և արտորայքն ապիտակացեալ և 'ի հունձս հասեալ, և աղաչեցեալ էրև տէր հընձոցն և էլին մշակքն 'ի հունձս, և արդ մանդաղք թէքեալք, և մշակք պատրաստք. և ոչք հնձին ոչ առաջի, վասն զի ծղօտ միայն՝ և սուղ ինչ նշմարանք արտորայիցն երևէին։ Քանզի վաճառականքն մեր հոգեւորք յորժամ գարձան 'ի մեծայամ ուղղեւորութենէն, ոչ գտին զառաքիչսն իւրեանց, զի վախճանեալ էին սուրբքն, և բարձեալ թա-

գաւորութիւնն, քայքայեալ վայել-
չութիւնն, և սպառեալ ուսումնա-
սիրութիւնն, պղաւաղեալ կարգա-
ւորութիւն և բազմացեալ անկար-
գութիւն, նսեմացեալ ճշմարտու-
թիւն, և զօրացեալ ստութիւն։ Վասն
որոյ ողբս առեալ հառաչէին, հա-
շէին, արտասուս յաչաց կաթեցու-
ցանէին, ձեռն 'ի ծնօտի հարեալ
ողբային. երբեմն 'ի վերայ ծնգաց
կապեալ տարակուսէին, զգլուխս
շարժէին, զաչս ողորմ յածեցու-
ցանէին. զծնօտս ապտակէին, ըզ-
բարձս ծեծէին, ողբերգական բանս
խօսէին, յեղանակաւ բացագան-
չէին, զանշունչ տարերս 'ի գութ
շարժէին, Է՞հա Է՞հա բարբառէին,
աւաղական բանս յաճախէին. Ի
զուր ժրացաք, ասէին, ունայն վաս-
տակեցաք, յանպէտս ջանացաք,
ընդ վայր խմաստացաք, յանշահս
դեգերեցաք. աւաղ երկայնութեան
ճանապարհին, մեծագոյն ոչնու-
թեանն, յոլով աշխատութեան, 'ի
ծովու ալեկոծութեանն, 'ի ցամաքի
վաստակելոյն, մեծագին բեռանց

կապելոյն։ Վաճառականքս պատ-
րաստք, և վաճառողքն չեն 'ի միջի.
պատկքս մերձ, և պատկադիրքս յո-
ժարք, և որք պատկինն չկք առաջի.
բանքս 'ի բերան և բանաբերքս լմնա-
տուն, և խնդրողք բանի ոչ երևին։
Դայեակքս մերձ՝ և ատինքս լցեալք,
և ատնդիայք ոչ դտանին. վարդա-
պետք հուսալ՝ և ուսումն ազնիւ, և
աշակերտեալք ոչ հանդիպին։ Վասն
էր. զի գերեցան, զի ցրուեցան, զի
քայքայեցան, զի ամայացան, զի
անտէրունչ շրջեցան. և էրուսա-
զայս կրեցին։ Վասն չար դոր-
ծոց, վասն բազմանալոյ անօրէնու-
թեանն, վասն անիրաւ դատաստա-
նաց, վասն կաշառառուութեան,
վասն պոռնկութեան, վասն շնու-
թեան, վասն գողութեան, վասն
սպանութեան, վասն նախանձու և
ատելութեան, վասն մատնութեան
և չարախօսութեան, վասն ագահա-
թեան և արծաթասիրութեան, վասն
ստութեան և երդմնահարութեան,
վասն հպարտութեան և ամբարտա-
ւանութեան, վասն ոխակալութե-

և ոանհարուԹեան, վասն իշխանաս-
սիրուԹեան և փառասիրուԹեան։
Վասն զի եղեալ քահանայն իբրև զմի
'ի ժողովրդենէն. վասն զի կրօնա-
ւորք քաղաքականաց վարուք վարին.
վասն զի ոչ զանազանին 'ի միմեանց
վանականք և աշխարհականք. այլ
ամենեքեան խոտորեցաք, 'ի միասին
անպիտանացաք. վասն որոյ մատ-
նեցաք 'ի ձեռս Թշնամեաց մերոց և
առեալք մեր յարեան 'ի վերայ մեր.
անօրէնք նեղեցին զմեզ, և հակա-
ռակորդք կռփահարեցին յանխնայ.
յաջ և յահեակ տանջէին, և յա-
մենայն կողմանց զզուէին. և առա-
ջի տարածեալ ունելով զամենայն
տեսակ վտանգից. ահ, գուբ և
որոգայթ. և որ փախչի յահէ, անկ-
ցի 'ի գուբ. և որ ելանէ 'ի գբոյ՝
անգանի յորոգայթ, ըստ մարգա-
րէին. և այս ամենայն եկն 'ի վերայ
մեր վասն մեղաց մերոց. և խոտա-
ցուցաք զպարանոց մեր և ոչ խոնարհ-
հեցաք, ստունգանեցաք պատուիրանի
Տեառն և ոչ զղջացաք, այլ
դարձաք սրտիւք մերովք յԵգիպ-
տոս։

Աւաղ երկիր Հայոց, դաւաւ գե-
ղեցիկ, աշխարհ արևելեան, հուպ
առ Եդեմ, ծանիր զլաւութիւն քո.
ընդէր ոգեղացար: Աւաղ բնակիչք
բարեբաստիկք. ազգ ընտիր, ժո-
ղովուրդ սեպհական. քահանայու-
թիւն, թագաւորութիւն, մարգա-
րէութիւն, մարտիրոսութիւն, ծա-
նիր զմեծութիւն քո, ընդէր վրիպե-
ցար: Աւաղ տունկ տենչալի, դրախտ
աստուածատունկ. բուրաստան
բերրի, գրգանք գովելի. կենաց վայ-
ելչութեան 'ի ձեռին տեառն, և
թագ ալքայութեան 'ի ձեռին Աս-
տուծոյ քոյ. ծանիր զաշնութիւն
քո, ընդէր խոտորեցար: Եւ արդ
ով ողբասցէ զքեզ ըստ արժանեւոյն.
Յերեմեաս չիք 'ի միջի, կամ այլ ոմն
ողբերգակ: Եկեղեցիք քո հրձիգ
եղեն, յարկք քո տապալեցան, ման-
կունք քո գերի վարեցան, զա-
րիւնս քո հեղին որպէս ջուր շուրջ
զՍիոնիւ, զաշխարհս ձեր առաջի
ձեր օտարք կերիցեն. քեռաւ թոռաւ
դուստր Սիոնի իբրև զհովանի մըր-
դատպահաց 'ի մէջ սեխենեաց և իբրև

զառաքեալսն յայդեսոջ. արկին զդիա-
կոնսն քո զէշ թռչնոց երկնից և
զգազանաց երկրի, եղաք նախատինք
դրացեաց մերոց՝ և այսն կատակա-
նաց թշնամեաց մերոց։ Աւաղ կորըս-
տեանս, աւաղ թշառութեանս,
աւաղ ամայութեանս. եղծաք, ա-
պականեցաք, կորստեան մատնե-
ցաք, ընկալաք 'ի ձեռանէ Տեառն
բազմապատիկ զբաժակ բարկու-
թեան, զբաժակ դառնութեան,
զբաժակ վշտի։ Եւ արդ զարթիր,
արդ սարջացիր, զոնէ զգաստացիր,
արի կարդա առ տէր Աստուած քո,
աղաղակեա առ նա ցաւագին ան-
ձամբ. աղաչեա զերեսս նորա,
պաղատեա առ նա ասելով. Դարձ
առ մեզ Աստուած փրկիչ մեր, և
դարձո զսրտմտութիւն քո 'ի
մէնջ. Աստուած դու դարձեալ
կեցո զմեզ, և ժողովուրդ քո ու-
րախ լիցին 'ի քեզ. ցոյց մեզ Տէր
զողորմութիւնս և զփրկութիւն քո
տուր մեզ։ Զարթո զզօրութիւն
քո և եկ կեցուցանել զմեզ. մի յա-
ւիտեան բարկանար մեզ տէր, և մի

ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչև յազգ. մեք մեզաք՝ և դու բարկացար. այլ Ներեա՛ տէր, անսա տէր, քաւեա՛ տէր, հաշտեա՛ տէր. ողորմեա՛ տէր, փրկեա՛ տէր, կեցո՛ տէր։

Այսպիսին թերեւս բարբառէին երանելի առաջնորդքն մեր, այսպիսի՛ ձայնս արձակէին վաճառականքն ամենառատք, այսպիսի՛ թելադիր լինէին քարոզքն ճշմարտութեան, մշակքն հոգեւորք, դործօնեայք գեղեցիկք, բեռնաբերքն շահաւէտք, հարանածուքն երանելիք, փեսաւէրքն փառաւորք, առթօղքն արիական, կուսատածքն պատուական, վարդապետքն քաղցրուսոյց, դայեակքն դիւրահամբոյրք, դաստիարակքն դորովագութք, դպրապետքն բարեսէրք, հովիւքն քաջափառք, մատակարարքն երջանկացեալք, խմաստասէրքն մեծարգոյք, բարեբերքն բերկրալիցք, ճանապարհորդքն ճոխացեալք, սիւնքն հաւատոյ, ամրքն եկեղեցւոյ, արմատքն անմահու-

թեան, քանոնքն արդարութեան, չափքն խմաստութեան, յարդարիչքն օրինաց, հիմնացուցիչքն հաւատոյ, արձանքն ամրութեան, պատակքն պճնութեան, զարդքն զգաստութեան, խահարարքն խմանալի, մատուռակքն ցանկալի, բարձրացուցիչքն եկեղեցւոյ, վիսիթարիչքն արտեցելոց, սանձքն անզգամոց, փարթամացուցիչքն հաւատացելոց, դաւանիոլքն ուղղափառութեան, հաստատիչք հաւատոյ, նորոգիոլքն կարգաւորութեան, դարանակալքն խմաստութեան, պատմաբանիչքն փառացն Յիսուսի, ոչ բերդակքն գովելիք. որք խնդութեանն ոչ եղեն խրախակիցք, այլ արտմութեանն դատն ագակիցք. որք 'ի բերկրութեանն ոչ վայելեցին ընդ բերկրեալսն, այլ'ի դառնութեանն տխրեցան ընդ վատնդեալսն. որք յանդորրութեանն ոչ էին զուարճակիցք, այլ'ի թշուառութեան դատն չարչարակիցք. որք 'ի գերամբարձութեանն ոչ դատն բարձրացեալք, այլ'ի տառապանն նուաստացեալք.

որք ցնծութեանն ոչ գտան գասա-
կիցք, այլ ողբոցն եղեն ձայնակիցք։
Եւ ապա զի՞նչ գործէին երանե-
լիքն, զի՞նչ խորհէին կամ զի՞նչ ըզ-
մտաւածէին. հեռանային յաշխարհ-
է, ինքեանք յինքեանս երթային,
զամայութիւն սիրէին. յանապատս
բնակէին, լռութեան տային զան-
ձինս, աղօթից պարապէին, արտա-
սուօք զոտս սեառն թանային. մշտա-
մուռնչ հեծեծանօք ընդ տատուած
խօսէին. յանաւուր աքնութեամբ
զգիշերն 'ի գլուխս հանէին։ Սովա-
լուկ զանձինս առնէին, ծարաւով
տանջէին, ցրտակէզ և տօթակէզ
լինէին. լեշկ մաշկօք շրջէին, խա-
բաշնազգեստք լինէին, այծէիւք
զգեցէին, թեփակերք լինէին, ըն-
դովք շատանային, պաղովք ծառոց
բաւականային, բուսովք գալարեօք
և արմատովք. սիրոմն Աստուծոյ տա-
ջորէին, տուգ մեծ 'ի վերայ ազգիս
ունէին. բայց երկնաւորն յուսով
մխիթարէին. 'ի նեղութեան և յան-
ձկութեան տանջէին զմարմինս 'ի
խաչ հանելով, կարեօք և ցանկու-

թեամբք հանդերձ։ Ասէին, բազմանային ճշմարիտ խմաստից հետեւելով, զգործ սեռութեան սատանայական առնելով. 'ի բանից լուութեան գործոցք քարոզք լինէին, նախանձ բարի ամենեցուն շարժէին. և թէպէտ ծածկեցին զմարգարէութեան զերեցիկս, և զակամս պատուական յինքեանս թագուցանէին, բայց սակայն սուղ ինչ յայտնէին, փոքր ինչ ծանուցանէին. զոր օրինակ հուր ընդ յարդիւ ոչ կարիցէ զանխլանեալ, այլ կամ 'ի մարգկանէ սութեալ վառիցի, կամ 'ի փոքրագոյն ոքոյ շարժեալ բոց արձակիցէ, այսպիսի ինն կրէին կամ 'ի մարդկանէ խնդրեալք կամ 'ի հոգւոյն շարժեալք, մեծագին գանձիւ լնուին զեկեղեցի, անդին մարգարտիւ զարդարէին զառագաստ Սիոնի. ան պատուեմ զարդուք գեղատաձոյձ պանէին զբամբիշն երկնաւոր արքային. ճառիւք նեբբուղինոք, պատմութեամբք հոգեւորօք, խմաստիւք զարմանալեօք, մեկնողական հանդիսիւք։ Փայլեցին, պայծառա-

ցան, զարմանալիք ցուցան, երևելիք եղեն, հիանալիք գտան, ցանկալիք տեսան, բաղձալիք հաւատեցան. Ճշմարիտք, Ճոխք, խնամտուն, մաքուրք, մեծք, առաքինիք, սուրբք. յորոց ոմանք գլուխ եկեղեցւոյ կացին, ոմանք ակն եղեն, ոմանք ձեռք հանդիպեցան, և ոմանք այլ ինչ: Քանզի քաղաք 'ի վերայ լերին թաքչել ոչ կարէ, և ոչ Ճրագ ընդ ծածկութիւ զանխլացի. վասն որոյ աղ եղեն երկրի, և լոյս աշխարհի, և քաղաք ապաստանի:

Այլ ես անդիտացայ զանձն իմ, և 'ի վեր քան զարժանն իմ յանդգնեցայ, վասն որոյ չմեղադրես յամենեցուն ապահանջեմ. զի սէր գերայաղթ ամենայնի հանդիսի, և ինքն պարտասեալ յումեքէ ոչ տեսանի, զոր ակրատէսն ես կրեցի:

Բայց մեծն Մեսրովբ՝ յետ այնչափ հանդիսաւոր աշխատութեանն և դիւաց դրոյս մերոյ ուսուցութեամբ շնորհացն Աստուծոյ, և կարգելոյ դպրոցս մանկանց ամենայն ուրեք և վարժելոյ մեծով հոգաբարձու-

թեամբ, ջուրեալ եւս և 'ի Վիրս և անդ ըստ լեզուի նոցա արարեալ նշանագիր, վարդապետս և դպրոցս 'ի նմա եւս կարդէ. և ապա ինքեալ 'ի կողմն Աղուանից և նոցա եւս ստեղծանէ նշանագիրս ըստ կիսահոգագ և խեցբեկոր լեզուի նոցա. վերակարդելով և 'ի նմա եւս աշակերտանոցս, զի ըստ առակին՝ յորոց առիւծուց աղուէսք բազումք կերակրին, և յաղքայորդւոյ թագաւորին՝ թագաւորազունք յոլովք ճոխանան: Եւ ապա ինքն դարձեալ դառնայ 'ի Հայս, և գտանէ զսուրբն Սահակ անդադար 'ի թարգմանութեան պարապեալ: Բայց 'ի վախճանելն Վռամշապհոյ արքայի Հայոց, դնայ ապա մեծն Սահակ առ արքայ Պարսից Յազկերտ, և աղաչէ արձակել զկապեալն Խոսրով 'ի Հայս փոխանակ Վռամշապհոյ. որոյ և կատարեալ իսկ զՀայցուածս սրբոյ առնն, ապայ Խոսրովայ զտէրութիւն Հայոց. բայց նա 'ի կրկնակի թագաւորելն՝ ոչինչ աւելի քան զմի ամ կեցեալ վախճանի: Իսկ 'ի

վախճանեալն Յազկերտի, և փոխա-
նակ նորա թագաւորեալ երկրորդն
Վռամայ 'ի Պարսս, սա բազում
գառն ոձիրս զարթուցանէր 'ի Հայ-
աստանեօքս, և վրդովէր զամենայն
բարեկարգութիւնս յեղծումն և
յապականումն հասուցանել. զոր
և սեռեալ որոյն Սահակայ ըղ-
ջարին արկածս, գնայ 'ի մասն
Յունաց. վասն զի յերկուս ձեռ-
քեալ բաժանեալ էր Հայք 'ի մէջ
կայսերն և Պարսից։ Իսկ մեծն Թէո-
դոս Թէոդէս 'ի սկզբան անդ ընդ-
ունեալ Հայէր առ 'ի ջընդունել,
սակայն խմացեալ 'ի բազմաց լի զնա
ստուգագոյն շնորհօք և ամենայն
առաքինաշարժ վարուք, մեծաւ
պատուով և բարի օձանով ընդունի
իբրև զնոյն ինքն առաքեալ Քրիս-
տոսի. այլ և զնշանագիրսն որ առ 'ի
նոցանէն յԱստուծոյ ընծայեցաւ,
հրամայէ փութով ուսանել և զծախս
դպրոցացն յարքունեաւն լինել։
Նա ապա սուրբն Սահակ իսկ և իսկ
առաքէ զՎարդան Թոռն իւր առ ար-
քայն Պարսից Վռամ, խնդրել ըղ-

հաշտութիւն. և նորա մեծարեալ՝ զհայցուած սրբոյն կատարէ, թա-
գաւորեցուցեալ Հայաստանեայցս զԱրտաշիր որդի Վռամշապհոյ։ Սա
զեղեսեր միշտ 'ի գինջական չարիս ան-
արգել. զոր և պատճառս քսու-
թեան նախարարացն զայն գտեալ,
թուեցուցանէին իբր տաղտկացեալս
զինքեանս առ 'ի նմանէն գոլ. և
բոլոր առ մեծն Սահակ բարձեալ
հայցէին կցորդակից իւրեանց առ-
նել, և չարաչար առ արքային Պար-
սից, զի կամ կաչցի 'ի կապանս՝
կամ 'ի բաց ընկեցի թագաւորն
Հայոց։ Այլ նա թէպէտ և զկրս
բամբասանաց 'ի սուտս ոչ հանէր՝
սակայն մատնել զարքայն իւր հե-
թանոս արքայի ոչ առնոյր յանձն,
յուսալով տեսանել զկանգնումն
գլորեցելոյն և ոչ զընկճումն. Քաւ,
ասէ, լիցի ինձ գայլոյ զնմն մատ-
նեալ մոլորեալ ոչխար. զի թէ ա-
նառակ է, սակայն սուրբ միրուռ-
թեամբն գրոշմեալ է. պոռնիկ է՝
այլ քրիստոնեայ է. գինջացեալ մար-
մնով՝ այլ ոչ անհաւատ հոգւով.

զեղեն վարուք՝ այլ ոչ կրակապաշտ։ Եւ այսպէս զոխասցեալ իւր ոչ խարն ոչ փոխանակէր ընդ առողջ դաղանին։

Այլ Թէպէտեւ սուրբն այսպէս արդարախոհ լինէր, սակայն Վռամայ զսեղեան ջարախոհացն մուռուցեալ, և առաւել Սորմակայ որ զեղջուն տուսեր սատակիչ էր պատրաստեալ՝ ակն կալեալ փոխանակ սրբոյն Սահակայ դահակալել յաթոռն. և ապա 'ի բանս զԱրտաշիր արդելեալ, և մարզպան Պարսկի՝ Հայոց կացուցեալ, և ըզ-Սորմակն ջարալեղու փոխանակ սրբոյն Սահակայ կացուցանէ. որ ոչ սեղի քան զմի սմ տեսեալ, հալածի 'ի նոյն նախարարաց։ Յետ որոյ յետ նորա կացուցանէ Վռամ զմին սասրի Փրքիշու, այր ապարատան և յափշտակող, որ տանտիկին կանանք զսուն իւր մատակարարէր. և վասն զի և զսա ևս նախատրանքն ատեցին, ապա տայ զայլ ոմն սասրի Շմուէլ անուն, որ հեռեւոյ գտանէր վարուցն Փրքիշուի, առաւել ևս ապահու-

թեամբ մասամբ։ Եւ մեծին Սահակայ միայն զվարդապետութիւնն հրամայէ, և ձեռնադրել զորս Շմուէլն հաւանի։ Բայց մեծն Սահակ 'ի դնալն իւրում առ Պարսից արքայն Վռամ, բազում ինչ համարձակութեամբ խօսեցեալ առաջի նորա, և յանդիմանեալ զանաստուածութիւն նոցա, եւս առաւել վասն Արտաշիրի չարախօսութեանն, զի ասէր՝ եթէ վասն ճակատանութեամբ ախտին է նենգելն զնա, այն ձերոց օրինադրութեանցդ պանծալին է. և թէ ոչ՝ այլ իմիք ոչ է վնասակար. և այնչափ առաւել ձաղանօք եպերեալ զնոսա վասն անմտութեանն իւրեանց, մինչ զի զարմանային ընդ խմաստութիւն, և ընդ համարձակութիւն նորա. զի խօսէր անպատկառ զվկայութիւն Տեառն առաջի թագաւորաց ըստ մարգարէական հրամանին։ Եւ եկեալ երանելին 'ի գաւառս իւր՝ նստէր լռելեայն, պարապելով աղօթից և վարդապետութեան՝ սկսուցեալ առ Աստուած, սուգ մեծ ունելով 'ի արան

վասն կուրութեան մտաց անզգա-
մաց. և ոչ տայր թոյլ անձին մխի-
թարել 'ի վերայ բեկման ժողովրդ-
գեան իւրոց։ Իսկ նախարարքն Հայ-
ոց իբրև տեսին զինքեանս ամօթա-
լից 'ի վերայ անմտութեան գործոց
իւրեանց, գային միաբան զղջացեալք
առ տուրբ հայրապետն Սահակ,
ողբային, փարէին, առաջի անդա-
նէին ասելով. Մեղաք առաջի Աս-
տուծոյ և սրբութեանդ քում. և
հայցէին զի վերասին յանձն առցէ
զառաջնորդութիւն հօտին իւրոյ։
Իսկ նա յարատուս եղեալ պատմէր
նոցա եթէ յառաջ քան զբազում
ամս սուգ մեծ ունէի 'ի սրտի ի-
մում, զի ոչ էա ինձ Աստուած զա-
ւակ արու որպէս նախնեացն իմոց.
և երևեցաւ ինձ հրեշտակ Աստու-
ծոյ և ասէ. Մի տրտմիր վասն այդո-
րիկ եթէ ոչ էա քեզ Աստուած
զաւակ արու՝ և մի կոծեր զանձն
քո, այլ գիտացիր զի յԱստուծոյ է
երդ այդ. զի բառնալոց է քահա-
նայութիւն՝ յազգէ սրբոյն Գրիգո-
րի, և թագաւորութիւն յազգէդ Ար-

շակունեաց, և արդ դու մի տրտմիր, այլ միսիթարեա զանձն քո։ Եւ պատմեալ նոցա զառեսիլն զամենայն մի ըստ միոջէ, և ասէ ցնոսա. Որ-դեակք, փոխանակ իմ՝ ուր հոլու-եացէ զձեզ. և ինքնին վերակացու-ելինիցի ձեզ, որ նախախնամօղն է ամենայնի։ Այլ ինքն թէպէտ ոչ առնոյր յանձն կրկին առաջնոր-դելնոցա, սակայն ոչինչ կասէր միշտ զհոգևոր կաթն գիւեցուցանելման-կանց եկեղեցւոյ։ Եւ այսպէս բարի վարուք և առաքինասէր ճգնու-թեամբ և մեծաւ խնամարկութեամբ կացեալ՝ի մարմնի՝ երկարելով մինչև՝ի խորին ծերութիւն, և՝ի հասեալ ժամու հիւանդացեալ հիւանդու-թիւն մեծ՝ի Բաղրեւանդ գաւա-ռի,՝ի գեօղն Բշուր կոչեցեալ, և առ Գրիգոր վերապետի՝ի Նաւա-սարդի յերեսուն, յաւուր հինգ-շաբաթեայ. որ և զծնունդ սրբոյն՝ի նմին աւուր առն եղեալ։ Սա զան-մարմնոյն բերեր յինքեան զվարս,՝ի մահկանացու մարմնի զանմահն թողոյր իւր յիշատակ բարւոյ, ընդ

հրեշտակականն դասակցելով պա-
ղին, դահակարգեալ ևս ընդ ոչմէ
աթոռոյն քրիստոսականաց յանդ ե-
ղանութիւնն։ Իսկ զպատուականն
նորա մարմին տարեալ հանդուցա-
նեն 'ի Տարօն 'ի գեօղն Աշտիշատ։

Բայց զկնիկ վերցեալ միայն ամենայ
ապա սուրբն Մեսրովբ փոխի 'ի
կենաց աստի, 'ի Վաղարշապատ քա-
ղաքի, որ գրեթէ ըստ երկնայնոցն
զուարթնոց զարդու՝ ամենեցուն
զինքն բոլորապէս ցուցանէր. ուր
ապա և նշան պատնէշեալ 'ի վերայ
նորա փայլատակէր, խաչանման լոյս
նշուղն առկայացեալ երկար ժամն,
փառաւորելով զխաչակիր մարմինն,
զի Աստուած զփառաւորիչս իւր
փառաւորէ, և փառաւորի 'ի պա-
տիւ սրբոց իւրոց. և յոլով հակա-
ռակութիւն լինէր վասն երանե-
լոյն, զի իւրաքանչիւր ոք յիւրն
յօժարէր բնակութեամբ հանդուցանել
զսրբանեալ մարմին նորա. և զ-
րատեալ լինէր տէրն Աշխարհաց մեծ
իշխանն Հայոց Վահան, և մեծաւ
հանդիսիւ տարեալ հանդուցանէր

զնա՝ի յաստացեալ դեօղն Աշչական, և զկնա ընթանալով դադարցին նոյն լուսեղէն խաչանման սեսիլ, և անդ՝ի հանդիսան զնա փոխեալ, ապա սեսիլն անհրեւոյթ լինէր։

Այսպիսիք էին վարք երանելեացն, որքոյն Սահակայ և մեծին Մեսրովբայ, և այսպիսի քաջաքաջարութիւնք նոցա, մանաւանդ թէ և առաւել քան զսոյն զոր գրեալ է՝ի կատարեալ պատմութեանն նոցա։ Սոքա ամոլք հաւատոյ, սիւնք եկեղեցւոյ, պարիսպք պահպանութեան հաւատացեալ ժողովրդոց, առաջնորդելով՝ի շաւիղս արդարութեան։ Սոքա տունկք անմահութեան, արմատացեալ՝ի դնացս ջուրց, տալով միշտ՝ի դէպ ժամանակի զիմանալի պտուղն ոգեկեցոյց, որոյ կերակուր մնայ՝ի կեանսն յաւիտենից։ Սոքա պսակք եկեղեցւոյ, և պարծանք նազելիք որդւոց մեր Սիոնի, բազում հարս՝ի փառս ածել, համարձակապէս պարծել առ Աստուած ասելով. ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետ

ինձ Տէր։ Սոքա աղբիւրք եդեմա-
բուղխք 'ի շնորհաց Տեառն յառա-
ջեալք, արբուցանեալով զբանական
երկիր ծարաւուս՝ կենդանական
վտակօք, որոյ միանգամ արբեալն
երկրորդին ոչ կարօտի։ Սոքա գոյ-
եակք հոգևորք գոլովագուեթ սի-
րով ամենեցուն մանկանց Սիոնի. ըստ
ջամբեալով կերակրելոցն, որք ոչ
միայն լուսաւորեալք աշակերտե-
լոցն անձինք, այլև լուսատուք յո-
լովից խնդրողաց։ Սոքա օրինորդք
երկնից արքային, անթիւ կուսանաց
անձինս առթելով թագաւորին ան-
մահի, առատաբուղխ վարդապե-
տութեամբն զորս յորդորոյն հա-
սեին, իբրև զԹովկլաթ և զԱրածանի,
կամ իբրև Իրաթ և Դան՝ որ էին Յոր-
դանանան։ Սոքա գոտակք գրոց ի-
մաստից աղիսաբերգացն սուղրբայից,
երկարոգի տառիցն վերհից. որով
զանտարին տարբացուցին, և զան-
նիւթն 'ի նիւթ յեռեցին, և զան-
մարմին ընդ մարմնոյ կապեցին։ Ո՞վ
գերատանծ գիր զարմանալի. ո՞վ
հիահրաշալիս գերազարդեալ. ո՞վ

սիրալի սանդուխք մեր Էլից, անծա-
նօթ և ծանուցեալ, հեռաւոր և մօ-
տակայ, անբարբառ և Ճարտասան,
երաշտաբան և յամրախօս, սուբ-
հանգակ և միշտ հեծեալ. անթեւ-
թռչուն, անոտն դնայուն, կայիւք
վերացեալ, թռչմամբ մնացեալ,
երագընթաց և յամրաշարժ, 'ի տե-
ղի և անտեղի, 'ի մարմին և յան-
մարմին: Քառիւք զգայութիւք 'ի
քում ապատաւորութեդ դեգերին
բանականք. ընանին և ունայն են,
պարպատին և թափուր են. յա-
գին և սովեալք են: Եւ արդ զինչ
զքեզ կոչեցից. իմանալի թէ զգալի,
երևնայի՞ն թէ երևցայի՞ն, տատուա-
ծայի՞ն թէ մարդկայի՞ն, յերկնայս
գոմ թէ զինչ զքեզ առատացից.
դեգերեալ եմ առ դրուռն քո, վա-
րանեալ գոմ առ բանի քո, տարա-
կուսեալ եմ առ տաքսի քո. նե-
զիմ յեղանակաւ քո, տանջիմ 'ի
նեղբուղել քո, օտարանամ 'ի ծանու-
թանալ քո. այլ սակայն տատուա-
ծային փչումն զքեզ առատացից:

Եւ արդ դիր նախագոյն ծանու-

ցեալ յԵնոքայ որ եւթներորդ էր յԱդամայ, փոխեցելոյն 'ի փառս գերահրաշս. երկրորդ՝ գտեալ առաջատարակին 'ի կաւեղէն նիւթի տառատպեալ, ուստի ընկալեալ Քաղդէացիք, և փոխարկեալ Լատինացիք. և ամենայն ազգի մարդկան հնարիւք ստացեալ եղև գիր բաց 'ի Հայոց և յԵբրայեցւոց որոց յԱստուծոյ պարգևեալ եղև։ Եւ զի 'ի սկզբան լինելութեանն անախտ գոլով բնութեան մարդկան, անմոռաց մնայր 'ի մտի մեծ ամեծ գործք բարեգործին Աստուծոյ։ Իսկ 'ի յանդամանելն ընդ ախտիւք մեղաց բնութեան մերոյ, մոռացօնք ակրէր բնութեան, ուստի հնարեցան 'ի ձեռն գրոյ վերատին արծարծումն առնել 'ի բնութեան յիշատակաց սքանչելեացն Աստուծոյ. վասն որոյ և Առաքեալքն Տեառն զի անախտ ստացան բնութիւն, ոչ յօժարէին գրով ոչ մարդկան զհրաշագործութիւն անօրէնութեան Բանին Աստուծոյ, զի զամենայն մարդիկ կամէին իբրև զինքեանս լինել, ան-

մոռաց ունելով զնիշատակս 'ի մտի. և յորժամ ոչ զօրէաք այսմ բաւականանալ, հարկեցան գրով տալ հաւատացելոց զպատուիրանս Աստուծոյ։ Եւ արդ Եբրայեցւոցն որպէս ասացաւ պարգևեալ էին գիր յԱստուծոյ 'ի ձեռն մեծին Մովսէսի նախամարգարէի, առնելով նոցա օրինադրութիւնս ըստ հրամանին Աստուծոյ։ Իսկ 'ի նորումս մեզ միայն շնորհեցաւ գիր յԱստուծոյ 'ի ձեռն սրբոյն Սահակայ որ խընդութիւն կոչի, և մեծին Մեսրոպայ սրովբէատեսն անուան, երանելեացն անձանց՝ որք ըստակցեցան սիրով հոգւոյն առ իրեարս և խընդրեցին աղօթիւք յԱստուծոյ, կապակցութեամբ սիրով սրբութեան 'ի սէր սիրոյն միացեալք. որով կատարիւր նոցա տիրապէս պայման դրոհի միաբանութեանն. որք ձիգ և պինդ ունէին զմիաբանութիւնն, հանդոյն Մովսիսի և Ահարոնի, Յեսուայ և Փենեհեզի, Դաւթի և Յոնաթանայ, Պետրոսի և Պաւղոսի, Յոհաննու և Յակոբայ, Կոս-

տանդիանոսի և Սեղբեսարոսի , Տրդատայ և Գրիգորի , որոց առաքինութեանցն հետևողք գան և շնորհացն ժառանգք եղեն . որով սիրալի ցուցան 'ի մարմնի և Աստուած փառաւորեցաւ 'ի խորհուրդս նոցա . զի զփառաւորիչս իբր փառաւորէ փառաւորեալն յաւիտեան :

Եւ այժմ արդ եկայք և մեք միաբան ժողովեալքս փառաւորեալքս 'ի փառս փառաց պսակեալ հարցն մերոց սրբոց , զփառաւորիչն նոցա զՔրիստոս փառաց փառաւորեսցուք . որ է օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, և առաւել փառաւորեալ և երկրպագեալ յամենայն արարածոց իւրոց . ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :

ՏԵՍԻԼ

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՑ

ՏԵՍԻԼ

ՍՐԲՈՑՆ ՍԱՀԱԿԱՑ

Արդ ունկնդիր լերուք ինձ միա-
բանութեամբ ամենայն բազմու-
թիւնք ժողովրդոցդ, և ապառնեցից
ձեզ։ Յառաջ քան զամս բազումս՝
խորհուրդք անմխիթարքն նեղէին զիս
անդադար, զմտաւ ածելով և ապաշէ-
լով զբարձրեալն՝ շնորհել ինձ արու-
ոդի, որպէս և իմոց նախնեացն որ
յառաջ քան զիս էին ամուսնա-
ցեալք յաղագս որդեծնութեան։
Եւ արդ վասն զի մնասակարարու-
թիւն հզօրին առ խրատանչիւր ոք
արդար է և ճանաչող առաւել քան
թէ զոր մեք իմանամք և խորհիմք։

Էր ես 'ի մեծ հինգշաբաթեանն 'ի
զատկին ապուհացն 'ի հակմանց հա-

զորդեալ՝ ի ժամ երեկոյին պաշտա-
ման սրբոյ և մեզաքաւիչ խորհրդ-
դոյ կենարարին, Ճաշակեալ այլ
բնաւ ոչ ինչ, բայց հաց և ջուր և
աղ ըստ կանոնելոյ մեծի սուրբ ժո-
ղովոյն երեք հարիւր տասն և ու-
թիցն, որք՝ ի նիկիացւոց քաղաքին
այսպէս կանոնադրեալք հաստատե-
ցին, զորոց զկանոնադրութիւնն
կնքեալ սուրբ հոգին հաստատեաց։
Եւ կատարեալ կանոնքն յերկար-
ման առաջին գոբոլայիցն, և դապ-
պաշտոնեիցն ընդ նստեալն ծանր նիրհ-
մամբ՝ ի սատակութենէ բազմօրեայ
աքնութենցն որպէս կիսամեռք եղեն.
որոց զաւուրս քառասնորդացն ուժ-
գին պահօք և անդադար աղօթիւք
զցայգ և զցերեկ հանեալ էին յա-
ղօթս, և մանաւանդ՝ ի մեծի շաբա-
թուն առաւել յաւելուածովք ըզ-
նոյն աճեցուցանել փութային, ու-
շադրեալք աղօթից վասատակովք
հասանել վարձուցն հատուցման։
Եւ ելս Ճրագացն և կանթեղացն
առաւել աւչորեալ բորբոքէր, և ըն-
թերցօղն կամաւ յերկարէր զկար-

գայու�մեն յաղագս սակաւ մի առ-
նելոյ ոգի և բաւելոյ պաշտօնէիցն
առաջարկութեան կանոնին։ Մը-
նային և ժողովրդոցն բազմութեան
ժողովելոյ ըստ սովորութեանն 'ի
պաշտօն գիշերոյն, քանզի յորդոր
կամաւորութեամբ փափագէր իւ-
րաքանչիւր ոք այր և կին առ հա-
սարակ ժամանել արթնութեամբ
անձին փրկութեան։ Եւ էս նստէի
մերձաւոր սեղանն Աստուծոյ 'ի սուրբ
եկեղեցւոջն 'ի Վաղարշապատ քա-
ղաքի։ Եւ ահա յանկարծակի բա-
ցաւ հաստատութիւն երկնից, ընդ-
որ ծագեալ լոյս սաստիկ ելից զա-
մենայն երեսս երկրի. և կանգնեալ
երևեցաւ ինձ բեմ՝ չորեքկուսի ամ-
պեղէն, որոյ բարձրութիւնն հասա-
նէր մինչև յերկինս, և լայնութիւնն
տարածեալ ընդոյր զամենայն երկիր,
և 'ի վերայ բեմին երևէր տեսրա-
կատեղ յոսկւոյ սրբոյ, խորանարդ
ըստ արժանի սպասաւորութեան
տեառն՝ ծածկեալ յոյժ բարակ
կտաւով սպիտակափայլ գունով։
Եւ 'ի վերայ խորանաձև ծածկու-

թեն յայտնապէս նշան տէրունա-
կան խաչին երևէր. որոյ երևելու-
թիւնն ոչ նիւթեղէն, այլ լուսեղէն
ցուցանիւր: Եւ յանկարծակի եղև
շնչիւն խաղաղասիրդ օդոյ՝ և ցա-
ցաւ փեղկ մի'ի ծածկութեան կապ-
ւոյն, ընդ որ հայեցեալ տեսի և
ահա կայր 'ի վերայ բեմին սեղան
ոսկի չորեքկուսի ականակապ 'ի
բազմագունի ականց պատուական-
նաց ընդելուզեալս. և 'ի վերայ սե-
ղանոյն կայր հաց մի սուրբ, և ոչ-
կոյլ մի խաղողոյ ըստ պատուակա-
նութեան խորհրդոյ երկնաւոր փրկ-
կութեանն: Եւ մերձ առ սուրբ
խորհուրդն երևէր ծառ մի ձիթենի
վարսաւոր պաղալից յոյժ, զորոյ
ոչ կարէի առնուլ զջրի բարձրու-
թեանն անպատում և աքանչելի:
Եւ որոշեալք չորք ոստք ձիթենւոյն
'ի խոնարհ կողմ երկրի ձգտեալ
մօտէին: Յորոց երիք ոստքն միա-
ջոցի և հատարակապուղք երևէին,
և չորրորդն 'ի նոցանէ որպէս կի-
սաբաժ և նուազապուղք ըստ եր-
կայնաչափութեան և պտղաբերու-

թեան երկոցն երևէին, և պատուղք
չորեցուանց ոստոցն ոչինչ բնաւ էին
նմանք, և կամ հաւասար բազմա-
բերութեան պտղաբերոյծ ոստոքու-
թեան այլ պտղոց ձիթենւոյն, այլ
նուազք առաւել թուով և վախք
ոստքուութեամբ որպէս ծնկեալք
էին։ Եւ ընդ ահեկէ բեմին տեսա-
նէի աթոռ մի բարձր չորեքկուսի
ծովագոյն. ստուերակերպ ծածկեալ
թանձր կտաւով թխագունիւ, և
վերացեալ կտաւն 'ի շնչմանէ քաղ-
ցրոյ օդոյն եկեղոյ, տեսի և ահա
սկաւել մի մեծ արծաթի 'ի վերայ
աթոռոյն, և 'ի վերայ սկաւեղն կայր
նաւիորա մի բեհեզեայ ծալեալ, և
առ նմին գունդ մի ոսկի բոլոր, և մա-
գաղաթ հատուածաձև չորեքկուսի,
գրեալ 'ի սկզբանն կարգս ինչ տա-
կուցեալ՝ ոսկեատեսիլ գրով սքանչելա-
պէս ձեռամբ գրչի Ճարտարի, և 'ի
միջոցի կողմն մագաղաթին հեռի
յոսկեգիր կարգացն երևէին այլ
կարգք եղծեալք՝ ջնջագիրք, որ ոչ
ինչ բնաւ երևէին տեսիլք գրոյն, և
կամ կերպարան. և հուսկ յետոյ մա-

գաղաթին հեռի 'ի ընչագիր կար-
գացն՝ դարձեալ սեռանէի այլ ևս
կարգ մի և կէս կարգի գրեալ ոսկե-
գիր գրով առաւել աքանչելապէս
ըստ սեղեան առաջին կարգացն
գրելոց 'ի սկզբան մագաղաթին, և
կիսագիր կարգին մինչև ցմիջոց
գրոյն և ևս առաւել ոսկեսով էր. և
այլն մինչև ցկատարումն կարմրա-
գեղով։ Եւ կային շուրջ զծնօտիւք
սկսեալն անթիւ բազմութիւն տղայ-
ոց արուաց, այլ սակաւ և իգաց.
և ամենեքեան պայծառացեալ լու-
սազգեցիկք էին։ Բայց Ճառագայթ
փայլման պատմուճանաց նոցա՝ էր
որ կարմրագոյնս արձակէին նշոյլս՝
և էր որ այլ երփն երփն գոյնս աղ-
գի ազգիս։ Եւ դէմք ամենեցուն 'ի
սուրբ ոսկի սեղանն հայէին, չը-
գարձուցեալք բնաւ և ոչ ուրեք
զաչս խրեանց 'ի խորհրդոյն փ�-
կութեան։ Եւ սկսաւ յանկարծակի
սատակապէս շարժել գլուխմամբք
աթոռն, և զմանկանն զոր սեռանէին
'ի տես տղայութեան, առ ժամայն
վաղվաղակի փոփոխեալ 'ի հասակս

երիտասարդութեան կատարեալք լինէին. և էլեալ թևաղգեցիկք 'ի վերս 'ի սուրբ սեղանն, որ էր ընդ-լուզեալ 'ի բաղմագունի ականց թռուցեալ բնակէին. և համբարձեալ սուրբ սեղանն հանդերձ նոքօք 'ի վերս քան զբարձրութիւն հաստատութեան երկնի ծածկէր, և այսպէս եղեալ աներևոյթ տեսիլն ամփոփէր։ Եւ ես 'ի մեծի զարմացման ընկղմեալ ապշէի։

Եւ ահա յանկարծակի 'ի կերպարանս մարդոյ երևէր ինձ յերկնից այր լուսեղէն, որոյ տեսութիւն սաստկութեամբ լուսոյն մատչելոյցեալ ծածկէր զարեգականն լոյս. և սլացեալ այրն հասանէր 'ի տեղին ուր էան կայի, և իմ առաւել ևս հիացմամբ ապշեալ 'ի փայլակնացայտ երևմանէ առնն, անկայ վաղվաղակի 'ի վերայ երեսաց իմոց յերկիր, և նորա բուռն հարեալ զինէն կանգնեաց զիս, և հաստատեալ կացոյց զիս 'ի վերայ ոտից իմոց, և ասէ ցիս. Քաջալերեալ զօրացիր և մի երկնչիր, այլ հաստատեա զքիրս

քո յանուն հզօրին որ արար զերկն
ելիս և զանեղեալսն, և շնորհեալ
եցոյց քեզ զմեծ խորհուրդ յառա-
ջատեսս արարչութեան իւրոյ։ Եւ
ուշաբերեալ զօրացայ 'ի բանէ նորա,
և կանգնեալ կացի 'ի վերայ ոտից
իմոց, և ասէ ցիս. Զան էր ես արը-
տուամ, և կամ ընդէր զբաղմունք
նանրութեան զղատրեն զմիտս յըս-
տակ խորհրդոց քոց. վասն զի ան-
գիտական խորհրդովք յածեցու-
ցեալ զմիտսդ խեռվէիր, վասն ոչ
լինելոյ 'ի քէն արուս որդի. որ քաջ
ծանօթ էիր հզօրին թէ գիտու-
թեամբ բաշխէ զիւրաքանչիւր օգու-
տս, և ոչ զլացութեամբ խափա-
նեալ արգելու յուսքէ զարժանն։
Եւ արդ գթալով 'ի քեզ բարձրեալն
վասն սիրելոյ զքեզ, կամեցեալ հե-
ռացուցանել 'ի քէն զայդպիսի մոա-
ծութիւնդ, միսիթարեաց զքեզ
տեսլեամբդ յայդոսիկ, որ ցուցաւ
քեզ յայտնութիւն մեծ. ոչ միայ-
նութիւն յառաջիկայսս, այլ առ
յստակ ամենայն իրաց որ լինելոց
են մինչև ցվախճան աշխարհի։ Ծա-

նոյց քեզ ամենայն հաւատացելոց 'ի բան նորա, որպէս Աշմարիա նախ-նոյն քում առն Աստուծոյ որբոյն Գրիգորի։ Իսկ քեզ մինչև ցկատա-րումն աշխարհիս որ ինչ լինելոցն է ետցոյց զամենայնն։ Եւ արդ՝ լուր և պատմեցից քեզ զմեկնութիւն մե-ծի յայտնութեանդ, որպէս հրա-մայեցաւ ինձ 'ի վերին զորութենէն ծանուցանել քեզ զամենայն, և դու ունկնդիր եղեալ բազում ըզ-դուշութեամբ գրեա 'ի տախտակս սրտի քո անմոռաց, զոր և 'ի մա-գաղաթի գրոշմեալ թողցես հաւա-տացելոց Ժողովրդոց զգուշութիւն անսխալ մինչ 'ի վախճան աշխարհի։

Զբանալն հատատուութեամբ երկնի զոր տեսեր՝ և տարածեալ լոյս սաս-տիկ ընդ ամենայն երեսս երկրի, քանզի ահա 'ի գալստենէ կենարարի որդւոյն Աստուծոյ, բացեալ է դու-ռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսեան ոչք սիրեն զնա, և կա-տարեն զբան հրամանի նորա, յորս ծագեալ լուսաւորէ լոյս փառաց վարդապետութեան նորա։ Եւ

բեմն չորեքկուսի կանգնեալ որ ե-
րևեցաւ քեզ բարձր յերկրէ մինչև
յերկինս՝ հաւատն Աշմարտութեան
է, որով վերանան արդարքն 'ի ծան-
րութենէ աշխարհիս կենաց 'ի թե-
թևութիւն երկնից բնակութեանն.
և զի ամենեքեան գունով երևեցաւ
բեմն, վասն զի որ վերացաւն ամ-
պով, նոյն գալոց է վերացուցանել
ընդ իւր զարդարսն, ուր բազում
են և անթիւ օթեվանք 'ի տան ար-
քայութեան հօրն, զոր և դու տեղե-
կացեալ ուսար 'ի սուրբ հոգւոյն որ
խօսէր ընտիր արամբն Պաւղոսիւ,
թէ ամենայն յափշտակիմք ընդ ա-
ռաջաւորաւն յօդս: Եւ տեսարան-
տեղն ոսկի որ 'ի վերայ բեմին, զորոյ
վերայ արկեալ զմանուր կտաւն բա-
րակ, որով ծածկեալ էր սուրբ
սեղանն և որ 'ի նմա խորհուրդն:
Գիտեա և ծանիր զի ծածուկ է
խորհուրդն աստուածային գիտե-
լութեանն պատուականութեամբ և
մաքրութեամբ, ըստ պատուակա-
նութեան ոսկւոյն և մաքրութեան
կտաւոյն, յորոյ վերայ կանգնեալ.

նշան կենդանացուցիչ խաչին Երուսաղեմ, որով կենդանացեալ կանգնեցան ամենայն արարածք գլորեալ մեղաց։ Եւ դարձեալ զնոյն խաչն Երուսաղեմի 'ի գալատեանն Քրիստոսի, և ապա յայանի խորհուրդն դատաստանին և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց։ Եւ զի Երկեալ օդ ինչ քաղցրաշունչ որ Եբաց զման ինչ կատաւոյն։ Իսա զի ցուցաւ քեզ սուրբ հոգւոյն քաղցր խաղացմունքն, որ յայտնէ սրբոց իւրոց զխորհուրդն ծածկեալ աստուածութեան իւրոյ, ընդ որով կայր սեղանն ոսկի 'ի պատուական ականց ընդելուզեալ. սրբոյ Երրորդութեանն ծանուցանի միասնական էութիւն, որով զվարս և զճգնութիւնս արդարոցն որպէս զպատուական ականց զանազանումն առ ինքեան ապաւորեալ զուարճանայ, որք զճաշ կենաց՝ զփրկչին մարմին և զարիւն, արժանապէս ճշմարտութիւն բաղմեալք ընդ նմա ճաշակեն 'ի պատուական սեղանոյն. ըստ Երևելոյ քեզ հացին և ողկուզին 'ի վերայ

սեղանոյն, օրինակ մարմնոյ և արեան կենդանոյ զարշարանացն ծանուցաւ։ Իսկ երևումն քեզ սքանչելաւորիկ ձիթենեւոյն որ էր հուպ առ աէրուեանական խորհուրդն, բարձր և վարսաւոր, բազմաբեր պտղալից, ըղձուրս և զողորմութիւն և զսէր մարդկան առ միմեանս եցոյց քեզ ընդունողն. քանզի մօտ և առաջին և պատուական է աստուածութեանն աղքատասիրութիւն յամենայն բարեգործութիւնս, որ և առաջին արդարքն ընտիր երևեցան. Աբրահամ, Յովբ, և Կոռնելիոս և նմանք նոցա, առանց որոյ և կուսանացն արհամարհեալք վաստակք կուսութեանն արտաքոյ հարատևեացն ընկեցան։ Սովաւ Հանաչի յանձինս մարդկան կենիք քարոզութեանն Քրիստոսի, որ ասացն եթէ յայսմ ծանիցեն ամենեքեան զձեզ եթէ իմ աշակերտք իցէք եթէ զմիմեանս սիրիցէք, և մանաւանդ որ առատապէս զուարթութեամբ կամաւ կատարեսցէ զսիրոյն պատուիրան, ոչ միայն յաղքատս՝ այլ և

յընկերս և յեղբարս և առ ամենեռեան . որով հաստատի խաղաղութիւն աշխարհի և տէր փառաց բնակէ 'ի միջի նոցա , շնորհելով զհանգիստ և զառատաբեր պտղաբերութիւն երկրի . որպէս տեսանէիր բարձր զձիթենին և լիապտուղ և վարսաւոր . և ոստքն չորս ձիթենւոյն որ 'ի խոնարհ կողմ երկրի ձգտեալ , երևելով երեք ոստքն հասարակատեսք չափով և անառաւել միաթիւք պտղովք , և զչորրորդն 'ի նոսա զոր կիսաչափն ըստ հասարակութեան երիցն , և պակասաւոր ըստ պտղաբերութեանն տեսեր . յորոց չորեցունց պտուղքն վոխուք էին և թառամք , և բերքն պակաս և աննմանք . քան զայլ ոստքատեսիլ պտուղս ձիթենոյն : Արդ ամփոփեալ զուսնկնգրութիւնս մտաց . քոց , լուր և ասացից . քեզ զոր ինչ սահմանեաց բարձրեալն յայսմ հետէ մինչև 'ի վախճան աշխարհի : Երեք տասներեակք ամօք՝ և կէս տասներեկի համառօտեցան 'ի վերայ ամենայն աշխարհի

մինչև յերևումն պղծոյն անապա-
տի , զոր 'ի Դանիելէ մարգարէէ
ասացեալէ սուրբ հոգւոյն : Եւ լինին
առքա յայտնապէս թուով երեք հա-
րիւր և յիսուն ըստ միաբոյգ պտղոց
երից ոստոցն և կիսոց . և զի տեսեր
զպտուղս ոստոցն թառամս և ծըն-
գեալս և ոչ ինչ բնաւ նմանս այլ
պտղոցն որ 'ի ձիթենւոջն էին : Տես
Ճշմարտապէս և ծանիր , զի բար-
ձեալ է սէր և արդարութիւն յա-
մենայն մարդոյ , որք ստութեամբք և
ոչ ստուգութեամբ կարծեցուցա-
նեն զանձինս սիրուն և պատուի-
բանապահս . և այն յայտնի գրեալ
կայ և կնքեալ 'ի դպրութիւն ամե-
նագիտին , որ ներէն երկայնմտու-
թեամբ և հաստուցանէ անաչառու-
թեամբ : Եւ ընդ ահեկէ բեմին որ
ցուցաւ քեզ ամենա չորեքկուսի ,
ծովագոյն սառնակերպ , նստումն
դահու քահանայութեան և թա-
գաւորութեան ծանուցանի , զոր
արդարև բանն Աստուած հաստատէ .
յորոյ վերայ կայր սկսեալն արծաթի ,
քանզի իբրև զարծաթ ընտիր և փորձ-

ձեալ լուսափայլս յամենայն ազգս
ընդունողաց սիւռեալ տարածեցաւ
բանն , զոր և սաղմոսերգն վար-
գասպեսէ սուրբ հոգւոյն յասելն՝
թէ բանք տեառն են բանք սուրբ
կրկին զարծաթ ընտրեալ և փորձեալ
յերկրէ , և զասելն յերկրէ՝ դի-
տացես թէ զերևումն մարմնով 'ի
սուրբ կուսէն յայտնէ մարգարէն ։

Եւ զի երևեցաւ քեզ ծովագոյն
սառնանման տեսիլ աթոռոյն , նշա-
նակեալ ցուցանէ զծփումն ալէկո-
ծութեանն աշխարհիս Հայոց , քանզի
և թխագոյն թանձր կոտաւոյն ծած-
կումն զօրինակ բերէ թանձրամած
սքոյն որ ունելոց է զաշխարհ ամե-
նայն . վասն զի տեսիլդ 'ի վախճան
է , և նախորան բեհեղեայ զոր տե-
սանէիր ծալեալ և եդեալ 'ի վերայ
սկաւեղն , և զգունդն ոսկի որ կայր
մերձ առ նախորանն , նշանակէ
քեզ քահանայութիւն և մեսան
զթագաւորութիւն ։ Եւ զի ոչ ոք
էր արկեալ զիւրեաւ զնամփորան ,
և ոչ այն ոք էր որ ունէր 'ի ձեռին
զգունդն , լուր զսուրգասպէսն և 'ի

միտ առ. զի լուելոց է մերձ ընդ
մերձ թագաւորութեան յաղագէդ Ար-
շակունեաց, և քահանայութիւն 'ի
ցեղէ արժանաւոր քահանայապե-
տին Գրիգորի։ Եւ մագաղաթն հա-
ատածաձև որ ցուցաւ քեզ, գրեալ
'ի սկզբանն կարգս լինչ ոսկեղէն
գրով. զձեռնադրութիւն արանց
սրբոց եցոյց քեզ շնորհք հոգւոյն,
որք 'ի զաւակէ ցանկալւոյն Գրիգո-
րի յաջորդեցին արժանաւորապէս
զաթոռ քահանայապետութեան.
նոքա են արք ընտիրք գրեալ ոսկե-
աեսիլ գրով 'ի դպրութիւն կե-
նաց։ Եւ զի երևէին 'ի միջոյ կող-
ման մագաղաթին հեռի յոսկեգիր
կարգացն, կարգք լինչ խանդարեալք
և ջնջագիրք, գիտեա զի նատելոց
են քահանայապետք ոմանք յաթոռ
սրբոյն Գրիգորի՝ որք ոչ ըստ հրա-
մանի սուրբ առաքելոցն, և ոչ ըստ
կանոնի պատուական սուրբ ժողո-
վոյն երեք հարիւր տասն և ութից
լինին ձեռնադրեալք յերկնաւոր 'ի
պաշտօնն, այլ ըստ փառաց աշ-
խարհի ձգտեալք 'ի պաշտօնն յան-

դգնութիւն, որք են արծաթասէրք առաւել քան աստուածասէրք. և վասն զի սուտ քահանայութիւն և խոտան՝ ըստ հաճոյից բարձրելոյն ջնջեալ են 'ի դպրութենէ երկնից բարութեանցն, տալով դատաստան դեհենին այրմամբ զանձանց և զժողովրդոցն կորստեան: Եւ այլ կարգն և մեւս ևս կէս կարգի որ երևեցաւ քեզ դրեալ սքանչելապէս ոսկեգրով 'ի տորին եղը մագաղաթին ըստ առաջին յօրինեալ կարգացն գրելոց 'ի սկզբան մագաղաթին՝ ծանիր հաւատաւ զի մերձ յերևումն անապատին պղծութեան դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, և նորոգի աթոռ քահանայապետութեան 'ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի: Վասն զի ոչ էին արհամարհեալք և ընկեցեալք յերկիր 'ի կոխուծն, այլ յայտ ական երևմամբ կայր գունդն, և ծալեալ պատուականութեամբ ցուցաւ քեզ Նամիրոսն, որ ևս առաւել հաստատապէս եցոյց քեզ, և ծանոյց քեզ զայս վերին ազդեցութիւնն՝

աքանչելատեսիկ ոսկեգիր կարգաւն
և կարգակիսաւն . որ 'ի ժամանակս
գոռոզացելոյ Թշնամւոյն արդարու-
Թեան՝ նսաի քահանայապետս ար-
գար 'ի Ճշմարիտ վիճակէ ցելին
սրբոյն Գրիգորի , և քահանայա-
ցեալ առաջինն կատարէ զաւուրս
իւր կրեալ ճգնութիւնս բազումս 'ի
սուտ առաքելոց Իշխանին կորըս-
տեան , և վախճանի խաղաղական
հանգստեամբ և ոչ սրով . և մեռան
ևս զաւակ նորին յաջորդեալ զա-
Թոռ քահանայապետութեանն , և
բազում՝ և ազգի և ազգի համբե-
րեալ քերանաց և գանից և սովոյ և
նեղութեան՝ ժամանակս բազումս
յանօրէն Իշխանին գահՃաց , սրով
ընկալեալ զվախճան մարտիրոսա-
նայ : Այն զի ցուցաւ քեզ 'ի կար-
գին մատն մի գրելոցն կարմրագե-
ղով , ստուգեալ հաւատարմու-
Թեամբ գաւանեաց զկատարումն
մարտիրոսութեանն որ գիպելոց է
սրբոյն : Եւ որ երևեցաւ քեզ բազ-
մութիւնք ազգացն շուրջ կալով 'ի
վերայ արծաթատեսիկ սկտեղն ,

զուարճացիր ցնծալից ուրախու-
թեամբ՝ զի ահա յարդանդէ զաւա-
կիդ որ տուաւ քեզ յարարչէն, էլ-
ցեն բազում շառաւեղք ալք ընտիրք
զօրութեամբք։ Ընդ որ միաբանեալ
և այլ բազմութիւն լաւ արանց յազ-
գէ նախարարացդ Հայոց, որք զօ-
րացեալ սուրբ բանիւն Աստուծոյ
զյարուցմունս թագաւորաց և զըս-
պառնալիս իշխանաց առ ոչ ինչ
համարեալ արհամարհեսցեն, միա-
ցուցեալ զանձինս ընդ յոյս շնորհի
երկնաւոր կոչմանն, չհայելով 'ի
մեծութիւնս անոտիս և ոչ 'ի փառս
առժամեայս։ Ընդ որոյ վաճառեալ
ոմանց զփառս անեղին Աստուծոյ
ընդ անոտի և ապականացու կենաց
աշխարհիս ուրացողք լինին. վասն
զի մնա է առ դուրս վախճան թու-
լացելոցն 'ի կորուստ, և հասեալ
կայ հուպ՝ օգնութիւն զօրացելոցն
'ի փրկութիւն, յորս և դու հայե-
ցեալ շնորհի ակամբ տեսեր շուրջ
զաստուածային բեմիւն պարելով
զողջոյն, չհայելով բնաւ 'ի սայ-
թաքմունս անոտի հեթանոսական

պաշտամանցն, յորոց ոմանք կա-
տարելութեան հասեալք՝ մարմնա-
ւոր ական պատկին լինին արժանիք.
և այլք յարանց այլ գոտանին և 'ի
կանանց, որ թէպէտ և ոչ սրով
այլ 'ի շնորհէ սուրբ հոգւոյն զորա-
ցեալք բազում բարեգործու-
թեամբք կատարին, որպէս և երևէ-
ին քեզ լուսացայտ նշոյլք արձա-
կեալք 'ի մանկաւոյն. ոմանց կար-
մրագոյն փայլմամբ երփն երփն, որ
զկատարելոցն արեամբ գուշակէր
զնահատակութիւն, և զայլոցն պէս
պէս ճառագայթիւք ծանուցանէր
զշողումն. որպէս և զբազմափայլ
գոյնս լուսաւորութեան առաքինի
մարդոյ, վասն զի բազում են և
անթիւք ճգնութիւնք և վաստակք
արանց արդարոց:

Եւ զի շարժեցաւ սաստիկ գլորդ-
մամբ աթոռն զոր տեսեր, և որ
երբեմն տղայքն քեզ երևէին յա-
ճուումն կատարելութեան բովանդա-
կեալք յերկրէ յերկինս թռուցեալ
համբարձան. բովանդակապէս քեզ
յերկրիս կենցաղս արդարոցն,

և յերկինս զլինելոց նոցա զհրեշ-
տականման փոփոխումն եցոյց պար-
գևատուն բարեաց։ Քանզի իբրև
զողայս անմեղութեամբ յաշխարհի
կացին արդարքն. չգարձուցանելով
և ոչ ուրեք զհայեցուածս մտաց իւ-
րեանց 'ի զբաղմունս նանրութեան,
այլ ուշադրեալք 'ի հրաւիրումն
երկնաւոր ուրախութեանն ևեթ
հայեին։ Քանզի բազում և խիստ
վրդովմունք յայսմ հետէ լինելոց
են յաշխարհի, յարուցմունք թա-
գաւորաց 'ի վերայ միմեանց, սով,
սատանութիւնք, և բազում ընկըլ-
մելութիւնք, որք զգալուստ մծաա-
ւոր որդւոյն կորստեան նշանակեն,
որ եկեալ նասի ըստ գրեցելոցն 'ի
տեղւոջն սրբութեան ցուցանելով
զինքն աստուած, որ հաշին և մա-
շին 'ի զօրութենէ վերնոյն, զոր ինքն
տէր Յիսուս սատակեաց հոգւով
բերանոյ իւրոյ։

Եւ յայնժամ կատարեալ վա-
րուք թուիցեն արդարքն 'ի յաւիտե-
նից յարկան, և այնպէս յամենայն
ժամ ընդ տեառն լինիցին. և ապա

յայտնապէս կատարի առ նոսա բանն տէրունական բարբառոյն որ ասէ՝ թէ “Ուր ես եմ, անդ և պաշտօնեայն իմ՝ եղիցի ,, : Եւ կնքեալ զտեսիլդ որ ցուցաւ քեզ թուով յայտնութիւն 'ի բարձանց , քանզի ոչ վրիպեսցի այսի բան մի մինչև կատարեսցի ամենայն : Եւ ես իբրև 'ի քնոյ զարթուցեալ'ի տեսլենէն զոր եցոյց ինձ բարձրեալն՝ որպէս յարթնութեան յայտնապէս , և 'ի զարմացման մեծի եղեալ փառաւորեցի զմարդասէրն Աստուած որ արժանի արար զիս այսպիսի մեծի և ահաւոր տեսչութեան : Եւ լուեալ դադարեցի 'ի յայտնելոյ զայս մարդոյ մինչև ցայսօր ժամանակի : Եւ այժմ՝ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղեալ սրտի , այլ թաղուցանել երկուցեալ . զի մի իբրև զլացօղ պատուհասեալ դատեցայց 'ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ , որ և գրով ինձ զաւանդս զայս հրամայեաց թողուլ յաշխարհի : Եւ լուեալ զայս ամենայն խօսս բաղմութեան աւագանւոյն Հայոց , տանուտէրացն և սեպուհեացն և

միահամուռ ժողովոյն բազմութեան 'ի սուրբ հայրապետէն Խաչակայ, յարուցանս հարեալ զարհուրեցան: Եւ այնուհետև ոչ ոք խշխէր յաղագս այսպիսի բանից ասել ինչ ընդ սրբոյն և կամ ճառել:

Յիշատակ նորա օրհնութեամբ, և աղօթք նորա 'ի վերայ մեր ամենեցուն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԿԱՆՈՆՔ

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՑ

ԿԱՆՈՆՔ

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

Յաղագս եպիսկոպոսաց թէ ո՞ր-պէս պարտ է ուսնել զքնարանիս սուրբ եկեղեցւոյ.

Ա. Այսելու և հասարակաց հայր է Եպիսկոպոսն. վասն այսր-ինկ առանց ակնառութեան պարտի զհաւատացեալս նմա յԱստուծոյ հօտն, անաչառութեամբ յանձան-ձել զուխտս սրբոյ եկեղեցւոյ, տե-սուչս և առաջնորդս գաւառաց և գիւղից կացուցանելով՝ ոչք անուա-նին Քորեպիսկոպոսք. զի սրբոց և նախանձաւորաց օրինաց, և հմուտ եղելոց վարդապետութեան՝ արժա-նաւոր է տալ զայնպիսի պատիւ, ոչք զժողովուրդն բաւական լինին

խրատել՝ շահելով զմեղանչականու-
թեամբ մոլորեալսն, և պայծառա-
ցուցանելով զՀիմարիսան Հառա-
գայթաւէտ պատուիրանացն պատ-
մութեամբք։ Զի և քահանայք ա-
ռանց տարակուսանաց ուսցին մի-
ծարել զաստուածընկալ սեղանն
յորոյ վերայ կատարի կենդանարար
խորհուրդն ապրեցուցչին մերոյ
տեառն. և զփրկական աւազանն
մկրտութեան՝ որոյ ծննդեամբ վե-
րըստին նորոգիմք 'ի յոյս կոչմանն
Աստուծոյ։

Բ. Արդ մի՞ ոք զայսպիսի տես-
չութիւնս զինուորաց կամ՞ տգիտաց
ումեք հաւատասցէ, և մի՞ մերձաւո-
րաց իւրոց շնորհուկս ինչ նոցա առ-
նելով սիրոյ ըղձմամբ, յորմէ կան-
խաւ հրաժարեցոյց փրկիչն մեր և
տէրն. Ո՞վ է իմ, ասէ, մայր և եղ-
բայր, եթէ ոչ սիրողք պատուի-
րանացն Աստուծոյ. զոր արդեամբք
իսկ կատարեաց՝ մեզ օրինադրելով։
Յակոբոս և Սիմոն և Յովսէս և Յու-
դաս եղբարքք յորջորջէին. և Պե-
տրոս և Յովհաննէս և այլ բազմու-

թիւն աշակերտացն յոլով ժամա-
նակս կատարեցին 'ի սպասահար-
կութիւնս. վիշտս և նեղութիւնս կրե-
ցին, զուն գործեալ ոգւով չափ.
և անօթ ընտրութեան ոչ զոք 'ի
նոցանէ անուանեաց: Իսկ Պաւղոս
որ հայհոյիչ և հալածիչ և թշնա-
մանող զինքն խոստովանէր՝ "Անօթ
ընտրութեան, ասէ, ինձ է նա
կրել զանուն իմ առաջի հեթանո-
սաց և թագաւորաց և որդւոցն Ի-
սրայելի,,:

Տեսանեմ զի ոչ է ակնառութիւն
առաջի Աստուծոյ. եթէ աչառի-
ցէք, մեզս գործիցէք. արդարև որ
ոչն վարիցի այսպիսի առաքինու-
թեամբ եպիսկոպոսն, ոչ կարէ
աշակերտ լինել տեառն, այլ յոյժ
հեռի և օտար է իբրև զմի ոք 'ի
սատանայական փրկչին: Զսա-
տուիրանաց սիրոցս և զկատարոցս
սահմանեաց, ասէ, իւր եղբարս.
և թէ, "Որ սիրէ զհայր կամ զմայր,
զուստերս կամ զդստերս ա-
ռաւել քան զիս, չէ ինձ արժա-
նի,,: Եւ դուք 'ի բարձրանալ հը-

ըամանացն 'ի վայր կործանեալ ընդ
երկիր քարշելով փարիք զառհմայ-
ին զազգականաց . ոչ սակաւս հնարե-
լով հնարս զի դիրգ և փափուկք
առնիցէք , և առաւել ստացու-
թեամբն զերկուցուք զտուն , մո-
ռանալով զքսամենելի պատգամն
ինքնասաց աւետարանին , թէ " Ա-
մենայն տունկ զոր ոչ անկեաց Հայր
իմ երկնաւոր՝ խլեսցի " :

Գ . Տեսանէք , զի զոր յոլով ժա-
մանակաց տաժանիք և ջանայք ար-
մատացուցանել , զկէս աւուրցն
կազմէք որոգայթ սատակման . ըստ
այնմ , թէ " Որ ամբարէ զմեծու-
թիւն առանց իրաւանց՝ 'ի կէս ա-
ւուրց կուրոց լքցէ զնա " : Զայս ոչ
էթէ յաղագս ամօթ ինչ առնելոյ
զոք ասեմ 'ի խոր խոցելով յանգի-
մանութեամբս , այլ զի ամենեքին մի
երեւեսցի յեկեղեցւոջ այսպիսի ան-
օրէն սովորութիւն . քանզի ար-
մատ է ընդհանուր չարեաց , և ոչ
ոչս աղծապիղծ անառակութեանց .
վասն որոյ դայ բարկութիւնն Ա-
ստուծոյ :

Դ. Որպէս վերագոյն ասացաք թէ հայր է Եպիսկոպոսն, և ըստ լաւութեան և աջողութեան պարտի փայփայել և յառաջեցուցանել զընտանին, և յանձն առնել զգործ եկեղեցւոյն ըստ կանոնի կարգաց, ուստի այլանգակ անառակութիւնք և հերձուածք խամրին, և վարք աստուածահաճոյ կենաց հանդերձ բարեպաշտութեամբ պտղալից, զարգարին։ Բայց գիտեմք, զի ոմանք ըմբռնացեալ ճոռոմաբանեն, մանաւանդ ազգասէր ծնկոտքն, ըղձարգարէին 'ի կիր առնուլ զբանն՝ թէ "Յընտանեաց զաւակի քոյ զանն մի արկանիցես"։ և զայն ոչ իմացան թէ ընտանիս զմիաբանութիւն հաւատոցն կոչէ։ Վասն որոյ բարձրաբարբառ փողն եկեղեցւոյ ճչդիւ մեկնեալ գոչէ։ Եւ զի՞նչ ասիցէ. "Թէ հնար է, ասէ, ընդ ամենայն մարդկան զնաղաղութիւն կալչիք, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ"։ Այս է պատճառ ընտանեացն խնամածութեան. բայց թէ գեռնաքարշ և մոմոս լինիցի, և

պատճառս կեղծաւորիցն բարեպաշ-
տութեան՝ սիրել և հարատացուցա-
նել զաղգայինս իւր՝ լուիցէ մեւս և
բանին որ մեղմութեամբ խրատէ՝ թէ «Մի
գիտասցէ ձախ քո զի՞նչ գործէ աջ
քո»։ Մի՛ ոք իշխեսցէ անամօթ
համարձակութեամբ զբարդ զայդ
առնել պատճառս բարեգործու-
թեան. զի չար է կամակար լքու-
թիւն քան զմեղանչելն. քանզի եղ-
բայրասպանն Կայէն և Գէհազի, որ
դառն ագահութեամբ էր զբաղեալ,
քան ընդ մեղացն եւս առաւել վասն
անամօթ լքութեան կրեցին պա-
տիժ պատուհասից։

Ե. Արդ զգուշութեամբ պահեսցի՛ ի մինչև մերում՝ սահմանս այս
կանոնական, և մի՛ ոք խոտորեսցի
յաստուածահաճոյ հրամանացս այ-
սոցիկ, որով պայծառանան եկե-
ղեցիք, բերկրին քահանայք, զու-
րախութիւն համբուրեն իշխանք և
դեղջուկք, և երանութեան բան
դրուատեաց յօտարաց ընդունիմք.
քանզի պարտ է մեզ ըստ գրեցե-
լումն՝ վկայութիւն բարի և յար-

տաքնոցն ունել, զի մի անուանն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի, որպէս երբեմն բազոքէր մարգարէն պարտաւորելով զԻսրայէլացիսն՝ թէ անուանն Աստուծոյ վասն ձեր հայհոյի 'ի մէջ հեթանոսաց։ Իսկ վասն քարիոք կարգաց և գործոց մերոց փառաւորեսցեն ըզհայր մեր որ յերկինս է, ասելով թէ «Սոքա են զաւակ օրհնեալք յԱստուծոյ, և ուրախութեամբ ուրախ լինիցին 'ի տէր»։ Հրեշտակակրօն վարուց և յաւիտենական կենաց նմանութիւն պարտի բերել յինքեան եպիսկոպոսն և ամենայն վարդապետք. ուր ոչ ակնառութիւն է և ոչ կաշառք, և ոչ ընչից մեծարանք, այլ պարկեշտութիւն և պատուիրանապահութիւն՝ մերձեցուցանեն լինել քաղաքակից սրբոց և ընտանիք Աստուծոյ. և դուք յընչաստիրութիւն և 'ի կաշառս կործանիք, և զդարշելին, և զպատուիրանազանցն, և զլինուորսն և ըզտգէսն հաւատարիմ համարիք 'ի գործ պատասաւորութեան եկեղե-

ցեոյ, և ջոլիր ևս յաճախեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոց. զի հաղորդութեամբ ձերով այդուիկ՝ զմիս ընտրոցն ուտէք և զոսկերս նոցա փշրէք. «Կերիցուք արբցուք, ասելով, քանզի վաղիւ մեռանելոց եմք»։

Զ. Արդ եթէ ոք գոցի Եպիսկոպոս և յառաջնորդս եկեղեցւոյ յայսպիսի պատուիրանազանցութիւնանամօթ և յանառակութեան՝ 'ի բաց ընկենցի 'ի պատուոյ իւրմէ, և բաժին նորա ընդ կեղծաւորս եղիցի, զի մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ. զի և այլք երկիցեն, և պաշտօն հարկիս այսորիկ մի՛ եղիցի դատապարտութիւն, այլ փառք։

Է. Ապա թէ ոք յիշխանաց կամ յանթառակցաց մերոց աչառիցեն այնպիսեացն, դատ տացեն առաջի Աստուծոյ ընդ այնոսիկ որ աչառիցեն՝ շնորհուկս առնելով Անանայի և Կայիափայ քահանայապետիցն, աստուածամարտ ուրացողացն, և պարտականաց տէրունական արեանն, որ տացեն պատիժս անլսե-

պառ յաւիտեանն։ Այլ մեզ է-
լեցի անբիծ սահման պատուիրա-
նացս այսոցիկ՝ վարել զկեանս մերոյ
պանդխտութեանս. զի յամենայնի
հաճոյ լինելով Աստուծոյ՝ խոստա-
ցեալոց բարութեանցն արժանի լի-
ցուք շնորհօք և մարդասիրութեամբ
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
ընդ որում՝ հօր՝ միանգամայն և հոգ-
ւոյն սրբոյ տացուք գոհութիւն և
փառք յաւիտեանս. Ամէն։

ՆՈՐԻՆ

ՅԱՂԱԳՍ ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Թէ որպէս պարտ է զկանոնական զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս Աստուծոյ.

Ա. Զի որքան և բարեպաշտից և առաքինութեամբ պայծառացելոց պարտ է հաւատալ զպատիւ կարգի պաշտամանս այսորիկ, վերագոյն Հառեցաւ 'ի մէնջ. որոց մաքուր են միտք յարծաթսիրութեան ախտէն, և ձեռք խրատից 'ի կաշառից, ուստուճասէրք և պարկեշտք, որք բաւական լեցեն և զայլս ուսուցանել, զամենայն յանձն արարեալ նոցա զեկեղեցիս, անյապաղ խնամով պայծառացուցանել աստուածահաճոյ վարուք, երկիւղածս և ըղ-

գասաս և հլու յամենայն բարեյոր-
դորութիւնս :

Բ. Եւ զառաձարս աղօթիցն՝ յորս
սուրբ և աստուածընկալ սեղանն է
հաստատեալ, յորոյ վերայ կատարի
մեղսաքաւիչ և կենդանարար խոր-
հուրդ մարմնոյ և արեան ապրե-
ցուցչին մերոյ տեառն՝ ըստ արժա-
նի բաւականութեանն զարդարուն
պահեսցեն անխափան լուցմամբք և
խնկարկութեամբ, և պարսպեալ
քաղաքորմովք, և մերձ 'ի նա միլը-
տասուն շինեսցեն. և անդ, որպէս
և սովորութիւն իսկ է և յայլսն՝ 'ի
նմին կանգնեսցի աւազան միրաս-
թեան, որոյ ծննդեամբ հոգին
սուրբ վերսին նորոգելով, դրոշմ
լինել որդիս լուսոյ. վասն որոյ բա-
ղում պատուոյ մեծարանօք պար-
սիմք մեծարել :

Գ. Եւ պաշտօն սաղմոսերգու-
թեանն անխափան կացցէ 'ի տուն-
ջեան և 'ի գիշերի ըստ օրինակի մայ-
րաքաղաքաց հովուապետին. զի ա-
մենայն ումեք չէ օրէն և իշխանու-
թիւն յապաղել զայն կարգ պաշ-

տամն, կամ նորաձևութիւնս ինչ առնել, այլ միշտ 'ի նմին յարատև։

Դ. Զնոյն և տեսուչ քորեպիս-կոպոսն պարտի համառօտել զամենայն եկեղեցիս. և եթէ ոք հեղգասցի կամ ստերիւրեալ գոցին՝ յանդիմանեսցեն, կշտամբեսցեն խրատու վարդապետութեան, և գանիւք և տուգանօք պատուհասեսցեն ատենական հրապարակաւ, զի և այլքն երկիցեն։

Ե. Քանզի պարտ և պատշաճ է յամենայն տարւոջ, յորժամ ժողովք կատարիցին՝ ըստ կանոնական սահմանադրութեանց, շրջել քորեպիսկոպոսաց 'ի հաւատացեալ նոցա յեկեղեցիսն, և քննութիւն առնել վարուց և կարգի պաշտմանն, թէ որպէս ունիցին, և համարս պահանջել յերիցանց և 'ի տարկաւագաց զժամուցն քարոզութեանցն, և զաղօթիցն մատուցումն, և զկնքատուացն մի ըստ միոջէ յարմարումն կատարելութեան, և ըղպատարագամատուցացն տարսափելի խորհրդոյն պատշաճող տպա-

սահարկուԹիւն. զի վոյԹեռանդն յօժարուԹեամբ և երկիւղիւ ան-
դրդուելն պահեսցեն։ Վասն որոյ Թէ հեղգայցեմք, համարս պահան-
ջելոց եմք. և եԹէ տարտամ և յե-
ռնեալ դտանիցի 'ի սքանչելի Ճա-
ռեցեալս աւանդապահուԹեանց,
կրեսցէ պատուհաս սաստիկ, ո ոք
և իցէ, 'ի պատուոյն իւրմէ զրկեալ
եղիցի՝ մինչև հաշտեսցի ընդ նմա
վարդապետն։

Զ. Եւ ոչ միայն երիցանց և սար-
կաւագաց պարտէ մշանջենաւորել
'ի պաշտամանն՝ այլ և ամենայն ուխ-
տի մանկանց. և եԹէ ոք մեղկ և
յոյլ իցէ՝ զնոյն կրեսցէ պատուհաս։
Այլ զոդէոս և զզինուորս ամենա-
ին իսկ պարտ է որոշել 'ի շնորհէն՝
որ ինչ 'ի ժողովրդականաց 'ի տունն
Աստուծոյ մնանիցէ. բայց եԹէ ին-
քեանք կամ զաւակք իւրեանց հրա-
հանգեսցին լինել արժանի։

Է. Նոյնպէս և զարբեցողն որո-
շեսցեն և զկռուողն, մինչև յապաշ-
խարուԹիւն և յուղղուԹիւն եկեսս-
ցեն ըստ առաջնորդին կամաց։

Ը. Իսկ զպռունկորգիս և որ յԵրկրորդացն են՝ հաւասար մինչև յԵրրորդ ծնունդն, ըստ առաջին կանոնաց հեռի կացցեն 'ի կարգէն և 'ի շնորհացն. զի պարկեշտ և սուրբ և աներկեան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծոյ, զարդարուն և Ճշմարիտ հաւատովք և գործովք առաքինութեանց, ցանկալի ամենեցուն և պատուական, որպէս և վայել է պաշտօնէից Աստուծոյ. զի թէ ղեւտական ազգն այնպիսի պատուէր ընկալաւ սոսկալի և զգուշաւոր անարատ սպասաւորութեան՝ ո՞րչափ ևս առաւել այժմուքս են արժանաւոր փութոյ՝ ըստ Պաւղոսի վկայութեան։

Թ. Արդ զամենայն զայս ահիւ և երկիւղիւ պարտի հրաման տալ և կարգել տեսուչ քորեպիսկոպոսն, զլաւս և զաջոցակս պատուոյ և մեծարանաց առնել արժանի, և զանպիտանս խոշտանգանաց, մանաւանդ զուսումնատեացն. զի որ կամակորէ յուսմանէ՝ անկանի 'ի չարիս ըստ գրեցելումն։

Ժ. Վասն որոյ անընդհատ պարտի պահել յարգարուն զդպրոցն, 'ի վանան և յայլ արժանաւոր տեղիս. զի լուսաւորեալք լուսով պատուիրանացն Աստուծոյ՝ զամենեսեան լուսաւորեսցեն. քանզի յորժամ ուխտն որ գլուխն է եկեղեցւոյ ընպիրք և պիտանիք լինիցին, ևս առաւել ժողովուրդն: Եւ եթէ եղիցի ոք 'ի ժողովրդենէ լոյծ անառակութեամբ՝ դիւրագոյն առնի ածել յուղղութիւն, քանզի չէ փոքր և յաղագս այդորիկ հոգ 'ի վերայ քորեպիսկոպոսին՝ այց առնել և վարուց ժողովրդեանն, և ըստ պարապոյ ուխտաւորեալ պահոցն և աղօթից՝ ուրախացուցանել զրոց սրբոց վարդապետութեամբ, շահել զմեղուցեալսն, և տալ տեղեկութիւն կրթութեան և պահպանութեան ամբիծ հաւատոց. և ըզգուշանալ և փախչել 'ի հերձուածողաց և յաղծապիղծ գործոց. քանզի դիտաւորութեան գործ նոցա է հաւատացեալ եպիսկոպոսին, ըստ օրինակի բարգաւաճեալ մեծի

մարգարէին Մովսէսի՝ որ կացոյց ոստիկանս 'ի վերայ ժողովրդեանն քննել և դատավճիռ հատանել, և զծանր ինչ բան առ ինքն հասուցանել. եթէ զդուշացին և զգուշացուցին ըստ պատգամի մարգարէութեանն, թէ "Ահա սուր գայ". և ազգ երկրին ապստամբեալ անփոյթ առնիցեն՝ նոքա յանօրէնութեան իւրեանց մեռցին, և նա ապրեցուցէ զանձն իւր։

ԺԱ. Ապա թէ զօշաքաղութեամբ յածիցի զհարկն միայն պահանջել, և ագահութեամբ զոսկւոյ և զարծաթոյ մթերս փափաքիցէ մթերել, և պղերգացեալ 'ի մուռացօնս զկանոնական քննութիւնս դարձուցեալ, զոր ամբողջ և անվթար պարտէր պահել, և բոլորովին թողեալ լքեալ զիւր դիտաւորութեանն պահպանութիւն, և եկեալ սուրն կորուսանէ զնուսա, ինքն եղիցի պարտական՝ և 'ի ձեռաց նորա արիւնն խնդրեսցի։

ԺԲ. Վասն որոյ պատրաստ կալ հրամայէ Ճշմարիտ քարոզն, հակել

և արթուն լինել. “Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս հովուել զԺողովուրդ տեառն, զոր ապրեցոյց պատուական արեամբ իւրով,,: Եւ զերախտիս հատուցմանցն պարգևի յայտ առնէ. “Զի յերևել հովուապետին ընդունիցիք զանթառամ փառաց պսակն,,:

ԺԳ. Եղիցի մեզ ամենեցուն խոյս տալ և փախչել'ի ջարէն, և արդարութեան լինել հետամուտ. յամենայն ժամ'ի հաճոյսն Աստուծոյ ծախել զկեանս մեր. զի անձանց և այլոց բաղմաց լինիցիմք առիթ փրկութեան, և բաւական եղիցուք համարձակութեամբ ասելով թէ “Ահաւասիկ ես և մանկունք իմ, զորս ետ ինձ Աստուած,,: Ընդարձաք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

ՆՈՐԻՆ

Կարգ քահանայից առ ժողովրդական, և նոցին ժողովրդականաց հնազանդութիւն և կարգ ողորմելոյ առ քահանայս.

Ա. Եղբարց սիրելեաց երկնչանց և վանականաց որպէս ամբաստանութիւն եղև առ մեզ 'ի բազում տեղիս ժողովրդականաց զքահանայից՝ թէ որպէս ծուլութեամբ ունին զկարգ եկեղեցւոյ պաշտաման և աղօթից, և զայլ ամենայն կարևոր առաջնորդութիւն. մանաւանդ վասն ուսումնասէրութեան, զի ասացին թէ ինքեանք չեն ուսեալ, և զորդիս իւրեանց 'ի դպրոց ոչ ունին, և վասն ագիտութեան՝ երկիւղ արժանի ոչ լինին. և մեզ զրկանք են և նեղութիւն, զի դատարկացեալ եմք, և նոքօք և 'ի

նոցանէ և խոստանացեալ էմք յամենայնի, և ամենևին անտեղեակ և անմխիթար գրոց սրբոց։ Զնոյն զոր լուաք 'ի նոցանէ՝ գիտացաք և մեք և ոգացաք բաղում տրտմութեամբ. վասն զի 'ի շատ տեղիս ոչ զոք գտաք քահանայութեան արժանի 'ի տգիտութենէ. և ժողովուրդն խոստանացեալ մնայր, և մեք տարակուսեալք ոչ գտաք, որ զնոսին ինքեանս կարդել 'ի քահանայութիւն. այլ հրաժարեցուցեալ զնոսա 'ի բնակութենէ՝ օտարաց սլատանեաց և գիտնոց տուաք զժառանգութիւն նոցա։ Արդ որպէս յամենայն ժամ պատուէր լեալ էր 'ի մէնջ առ ձեզ, և գրելով և յանդիման հրաման տալով վասն ամենայն կարգի եկեղեցւոյ՝ և ձեր անձանց կազմութեան, արժան էր թէ խրատեալ էիք. և այդպիսի տրտոնջ զձէնջ 'ի ժողովրդականաց ոչ հասանէր առ մեզ, և ոչ զձեզ 'ի թերութիւն տեսանէաք, և ոչ զեղջ և ապաշաւ լինէր մեզ։ Եւ վասն մոլոց և պղծոց եկեղեցւոյ զոր դուք

'ի ժողովրդականաց առնուք՝ և մեր ձեզ թողեալ է. և եւս, զի ամենայն պատիւդ ձեր հայի առ դիտութիւն, և արժանաւորութեամբ զկարգս եկեղեցւոյ ունել. և յորդորել զժողովուրդն 'ի խրատ բարի և 'ի պատկառանս, ամենայն հոգւոր երկիւղածութեամբ։

Բ. Արդ բարձէք այսուհետև 'ի ձէնջ զայդպիսի թշնամանս, զորդիս 'ի դպրոց կալարուք, զի գիտունք լինիցին. ծաներուք զի որպէս կուրութիւն աչաց՝ ատելի է մարմնոյն, նոյնպէս և տգիտութիւն ոգւոյ՝ ատելի է Աստուծոյ, մանաւանդ քահանայից. լուաք 'ի մարգարէէն՝ որպէս Եզեկիէլ գոչէ հոգւով սրբով և ասէ, թէ «Ո՛վ հովիւ տարաշարտ արօտ, որ թողի զխաշինս իմ՝ յաջ բազուկ քո և յաջ ակն քո»։ Այլ զի մի լուիցուք զնորին պատուհասն, այլ օրինակ ճշմարիտ կացուցէք զանձինս ձեր ժողովրդականաց՝ ամենայն պարկեշտութեամբ աղօթիւ և պահոց անձանձրոյթ հոգատանել և 'ի միտ առնուլ զասացեալսն

'ի Մալաքիայէ , թէ « Ընթուն՝ քահանային գիտութեան զգուշացին . զի օրէնք հարցանին 'ի բերանոյ նորա . քանզի հրեշտակ է հզօրի Աստուծոյ » :

Գ . Զամառն՝ գլխաւոր քահանայն հանապազորդեալ յեկեղեցւոջն կացցէ , և այլ ընկերքն շաբաթուք առ նմա փոխանակաւ կացցեն . զի պաշտամունքն տունջեան և գիշերոյ մի խափանեսցին , վասն զի այդ է գործ մշակութեան և նոյն պատիւ :

Դ . Մկրտութիւն առնել երկիւղածութեամբ , և կանայք 'ի ժամ մկրտութեան մերձ առ քահանայն մի իշխեսցեն կալ , որպէս սովորեցան ոմանք առնել յանդգնաբար և մկրտել ընդ նոսա . այլ 'ի տեղւոջ իւրեանց աղօթեսցեն :

Ե . Եւ սարկաւագունք՝ մկրտութիւն մի իշխեսցեն առնել . ապա թէ արասցեն , լուծեալ լինիցին 'ի սարկաւագութենէն հանդերձ պատուհասիւ . զի ոչ է սարկաւագն քահանայ , այլ սպասաւոր քահանային :

Զ. Եւ պատարագացն երախայ-
ւնք 'ի գլխաւոր քահանային տուն-
երթիցէ յամենայն ժողովրդական-
նաց, և երէց եղբայրք և այլ ընկերք
նոցա մի իշխեսցեն 'ի տունս իւրեանց
առնուլ պատարագիք, թէպէտ և
քահանայք իցեն. եթէ իցէ ոք որ
առցէ 'ի տուն իւր՝ ընդ պատուհաս-
սիւ լիցին, և գիտասցեն զի 'ի մէնջ
հատուցումն ընդունին արժանի ըս-
տունկանութեան իւրեանց:

Է. Եւ գլխաւոր քահանայն վասն
հանապազորդ յեկեղեցւոյն 'ի գործ
կալ՝ երկու երրորդ աւելի առցէ
քան զընկերս իւր, թէ գեւղն մեծ
իցէ:

Ը. Եւ յամենայն տեղեաց մերոց
իշխանութեանց յամենայն ամի ըզ-
կնի սրբոյ զատկին, զեւղ միրատու-
թեան հարկաւորութեամբ բերցեն
առ մեզ քահանայք, և ասոյ 'ի
մէնջ ընկալցին զօրհնութիւն իւղոյն,
և անձամբ մի օրհնեսցեն 'ի տունս
իւրեանց, որպէս սովորեցին ոմանք
'ի տգիտութենէ, վասն զի ոչ է իշ-
խանութիւն այդ քահանայից, այլ
եպիսկոպոսապետաց:

Թ. Եւ լսեմք թէ զեկեղեցւոյ ոպաս մանաւանդ զվարագոյր 'ի հարսանիս առագաստի փեսայի և հարսին, և զսկիհն 'ի գինըմպելիս յանուանս տան զինուորաց, վասն որոյ արժան է զքահանայն զայն խլել 'ի կարգէն իւրմէ վասն այդպիսի խառնակ և չար գործոց, զոր յայսմ հետէ այլ մի ոք իշխեսցէ առնել. իսկ եթէ ոք գոցի արարեալ, լուծեալ լիցի 'ի քահանայութենէն, ամենևին անմասն 'ի թողութենէ։

Ժ. Քահանայ այր՝ և որ 'ի քահանայական ժառանգութենէ ժողովրդական լիցեն, յաղագս տունս՝ յիշխանի տունս դայեկութիւն և այլ գործակալութիւն մի իշխեսցեն առնել, զի այնու պատճառաւ զբրկեալ նեղեն զժառանգակիցս իւրեանց՝ յորում դասն բազումք պարտաւորեալք. ապա թէ լիցէ ոք որ յանդգնեսցի առնել, 'ի կարգէն իւրմէ դադարեալ լիցի. և ժողովրդեան և եկեղեցւոյ բաժնի իշխան մի լիցի, և ընկերք իւր ընդ նմա հաղորդել մի իշխեսցեն, և ժողովրդ-

դականք զայնպիսին առ քահանայս մի՛ իշխեսցեն ունել։

ԺԱ. Տգէտ երէց եղբայրք՝ ժողովուրդ մի՛ իշխեսցեն ունել. երկիրնայք երէց եղբայրք՝ ընդ զինուորս կացցեն որոշեալ ամենեքին յեկեղեցականաց և 'ի մասնէ եկեղեցւոյն. վասն զի եղեն մարմնաւորքք։

ԺԲ. Եւ որպէս եղև անառակ սովորութիւն քահանայից և նոցին կանանց՝ դերեզմանս առ եկեղեցիս առնել 'ի տեղիսն արքութեան, յայսմ հետէ յառաջ՝ մի՛ իշխեսցեն առնել. այլ 'ի ժողովրդականացն հանգստարանս եղիցին և քահանայիցն հանգստարանք, զի արքութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի։

ԺԳ. Եւ արտաքոյ եկեղեցւոյ քահանայք մի՛ իշխեսցեն օրէնս 'ի տունս շինականաց տանիլ, և անդ տալ զարքութիւն՝ բայց միայն հիւանդաց։

ԺԴ. Ուսուցէք և զժողովրդականս յամենայն անառակութենէ 'ի քաց փախչել. յորիորատութենէ,

յարբեցութենէ, 'ի հակառակութենէ, 'ի զրկելոյ զաղքատս և զընկերս իւրեանց. մի կռուողս մի հարկանողս մի չարաբերս: Աստեղեն զշնացողս, զգողս, զպոռնիկս, զաւազակս. ամենեքին մի հաղորդեսցին և մի սանձնչական լինիցին այնպիսեացն, զի մի եղիցին և ինքեանք ընդ նոսին որդիք կորստեան: Զմանկուն իւրեանց սնուցանեն երկիւղիւ խրատու պատուիրանացն Աստուծոյ. զի այսպիսի զգուշութեամբ բարի յոյս ոգւոյ իւրեանց եղիցի առ Աստուած, և բարեշաւութիւն մարմնոյ ամենայն առողջութեամբ զարդարեսցի:

ԺԵ. Պատուէր արարէք նոցա, զի տղայոց կանայս մի խօսեսցին, և մի կատարելոցն՝ առանց զիրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ. և դուք քահանայք, տղայոց ամենեքին իսկ պատկ մի օրհնէք մինչև 'ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս չիցէ տեսեալ 'ի հաճոյս իւրեանց, պատկ մի իշխէք դնել առանց քննութեան և զնոսին

ինքեանս հարցանելոյ. դուցէ բռնադատութեամբ ծնողացն ակամայ հաւանեալք լցեն, և զայնպիսի հարսանիքն մի՛ իշխէք յանձն առնուլ, զի մինչև ցայսօր յայդպիսի անկարգութենէ բազում՝ ինքեանք դնացին յաշխարհի՝ հոգևոր և մարմնաւոր։

ԺԶ. Ապա թէ լսեմ՝ թէ ոք 'ի քահանայից յանդգնի, և արտաքոյ մերոյ հրամանի այնպիսեացն պսակ օրհնեսցէ, գիտասցէ զի քահանայն պատուհաս կրէ ըստ օրինակի ինքնակարացն, և ծնողքն ոչ անպարտ լինին 'ի պատուհասէ։

ԺԷ. Քահանայք միաբան կատարեսցեն զպաշտօնն և զպատարագս ագապացն. առանց աւետարան կարդալոյ մի՛ իշխեսցեն քահանայքն մատուցանել. ապա թէ դուցի ոք 'ի նոցանէ յորկորսութեան՝ յառաջքան զպատարագն, 'ի պատարագին հացն մի՛ իշխեսցէ երթալ, և յընկերաց իւրոց որոշեալ կացցէ։

ԺԸ. Նոյնպէս և շինականք որ յագարան հրաւիրեցան՝ պաշտաման

և պատարագի հաղորդեսցին. յառաջ քան զպատարագն մի՛ խշխեսցեն 'ի տունս իւրեանց ուտել և ըմպել։ Եթէ ելցէ ոք որ յառաջագոյն կերիցէ և արբցէ 'ի տան իւրում, 'ի հաց պատարագին մի՛ խշխեսցէ երթալ, զի մի՛ եղիցի դատապարտութիւն անձին և թշնամանք հոգևոր տօնին. զի խեղաբարութիւն այն՝ ունայն իսկ է։ Եթէ ոք յանդգնեսցի գալ՝ քահանայքն և ընկերք իւր մի՛ թողցեն 'ի նեղքս, զի ատելի է եկեղեցւոյ այնպիսի անառակութիւն։

ԺԹ. Եւ որք սովորեցին տգիտութեամբ մեղանչել ժողովրդականք՝ որք զպատարագի* կաշի և ղձրագու բաժանեն ի քահանայս, և յիւրեանց տունս տանին պատճառաւ վանաց, յայսմ հետէ յառաջ՝ մի՛ խշխեսցեն բաժանել. ապա թէ ելցէ ոք որ բաժանիցէ՝ քահանայքն զպատարագն մի՛ մատուցեն, զի մի՛ մեղացն այնպիսւոյն հաղորդեսցի. քանզի ոչ է բա-

* Ակնարկէ յազագս նախնի հաւատացելոց, եթէ ատտ և եթէ 'ի յետագայսն. որ արդ պատշաճապէս խափանեալ է ըստ իրին և ըստ զեղծմանցն։

ժինն այն բարի արարողաց պատա-
րագին։

Ի. Զպտուղս զնախնեաց կար-
գեալս՝ և զամենայն ընծայս ուխտից
զատկաց և ագապաց և զայլոց ոչնչից՝
ժողովրդականք սիրով և ըստ մուրթ
հատուցեն յեկեղեցիս և 'ի վանս
որպէս օրէն է, զոգւոյ և զմարմնոյ
պատճառս կենդանուէ մի արգե-
լեալ փակեցեն և խափանեացին 'ի
կենացն ոգւոյ։ Իսկ եթէ ոք կամա-
կորութեամբ ապատամբեալ յիւրմէ քա-
հանայէն և 'ի վանաց՝ արտաքոյ իւրոյ
եկեղեցւոյն 'ի վանս ուրեք կամ յա-
նապատս զպտուղս և զպատարագս
մատուցէ՝ այնպիսին ինքն և ընտ-
նողքն հեռի լեցին յօրհնութէ և 'ի հա-
ղորդութէ ընկերացն, հանդերձ ընտա-
նեօք, մինչև ապաշխարեցէ և տու-
ժեացի տուգանս յեկեղեցւոյ. վասն
եղև պատուիրանազանց և ոչ ամարտ։

ԻԱ. Գինիմպելիս 'ի լալիս մի ա-
րասցեն. աշխարս 'ի վերայ մեռե-
լոյն մի ոք առցէ, քանզի գիւտական
են ամենայն այդպիսի իրք. ապա
թէ լցէ ոք որ անհնազանդեալ ա-

բասցէ՝ պարտական եղիցի ապաշ-
խարութեան առ դուրս սուրբ եկե-
ղեցւոյն։

ԻԲ. Եւ քահանայք զգուշասցին
զյանցուցեալն միաբան առնել ար-
տաքոյ եկեղեցւոյ, և մի՛ խրոխտ և
'ի հակառակութիւն ընդդիմանալ
միմեանց և անարգել անձամբ զան-
ձինս, այլ խաղաղութիւն եղիցի
ձեզ յամենայն ժամ սիրելի և դոր-
ծակից։

ԻԳ. Յիշեցուցանեմ և ձեզ կրօ-
նաւէր վանականաց ամենեցուն,
վասն զի հրաժարեալ էք 'ի կենաց
երկրաւորաց, և պարտեալ Աստու-
ծոյ և աստուածայնոցն. զի նման-
նեսցէք անուանդ խոստովանութեան
և գործքդ. և եղիցի ձեզ սիրելի՝
պարկեշտութիւն, արթնութիւն,
պաշտօնասիրութիւն, նմանութիւն
ընդ յանձինս հրեշտակական վա-
րուց, օտարսիրութիւն և եղբայր-
սիրութիւն։

ՆՈՐԻՆ

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց.

Ա. Քանզի բազումք կարծէին ապիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել և այլ զոմն վանս, և տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս և հերձուածս մուծանել 'ի միաբանութիւն հաւատոյ, և մուրացան ըզպատուիրանին բանն որ ասէ. Մի տէր, մի հաւատք, մի մկրտութիւն. զի որ այլ և այլ կամի ասել՝ յայտնապէս և զհաւատոցն ցուցանէ ըզբաժանումն. քանզի եկեղեցի մեզ ոչ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ 'ի քարանց և 'ի փայտից է շինեալ, այլ զհաւատով շինեալ զաղգս մարդկան 'ի վերայ վիմին

հաստատութեան . ապա ուրեմն
Ճշմարիտ հաւատն է եկեղեցի , որ
դումարէ և շինէ զմեզ 'ի մի միաբա-
նութիւն դիտութեան որդւոյն Աս-
տուծոյ . զի նոյն ինքն կենդանա-
բարն ուսուցանէ՝ ասելով ցՊե-
տրոս . « Դու ես վէմ , և 'ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ՝,
և դրունք դժոխոց զքեզ մի՛ յաղ-
թահարեսցեն » : Արդ զի՞նչ իմա-
նայցեմք զասելն ցՊետրոս վէմ .
մի՛թէ որպէս զմի ոք 'ի քարանց ,
քա՛ւ լիցի . այլ մարդ բանաւոր ,
գլուխ առաքելական դասուն , և զի
անդրդուելի հաւատովք խոստովա-
նեաց զՔրիստոս որդի Աստուծոյ ,
երանութիւն ընկալաւ և վէմ ա-
նուանեցաւ : Ապա ուրեմն և շի-
նեալքն 'ի վերայ նորա չեն քարինք
անշունչք , այլ մարդիկ՝ նորին հա-
ւատոյ հաղորդակիցք : Քանզի ոչ
դանդաղին գիրք սովին անուամբ
ձայնել զտէր մեր և փրկիչ երբէք
երբէք ըստ պիտոյից . յիշատակէ
ահա և երանելին Պաւղոս զանուն
եկեղեցւոյ ասելով . « Զորս եդ Ա-

տուած յեկեղեցւոջ՝ այս են. Նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս », և որ 'ի կարգին է։

Բ. Տեսանէս զյարմարումն և ընդ-բարձրութիւն եկեղեցւոյ. զսուրբ և զամբիծ հաւատոցն ասեմ, որոյ առաքեալք և մարգարէք և վարդապետք են նաւավարք, ունելով նաւապետս զմարմնացեալ բանն Աստուած. և զնա իսկապէս խոստովանիմք ասել մայր եկեղեցի 'ի Քրիստոս հաւատացելոց. քանզի օրէն է նաւի զամենայն յինքն ամփոփելով ցամաքաթև յամենայն աշխարհական ծփանաց կարող լինել ապրեցուցանել. բայց միայն անեղկեան սպահեցուք զհաւատս՝ որով շինեցաք բանաւոր և մտաւոր եկեղեցի 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից։

Այսմ եկեղեցւոյ՝ ուսուցանէ Տիմոթեայ խնամ ունել, երանելի առաքեալն, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան անուանելով. յայտնի է, ասէ, 'ի նմա խոր-

հուրդն աստուածպաշտութեան . և յիրաւի՝ մանաւանդ թէ ՀՀմարիա իսկ . զի ոչ են բաւական ձայնաւոր կամ անշունչ արարածք յայտնել զԽորհուրդ աստուածպաշտութեան , այլ միայն բանաւոր եկեղեցիս : Վասն այսորիկ և սաղմոսն բարձրաձայն գոչէ թէ « Օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց » : Ահա և Սամուէլ մարգարէ որ հաւատարիմն կոչեցաւ՝ զնոյն ուսուցանէ 'ի պատուիրեալն իւրում Սաւուղայ . « Իբրև գնացես յինէն՝ հանդիպեսցիս եկեղեցւոյ պարու մարգարէից մարգարէացելոց » : Եւ դարձեալ թէ « Եկեղեցացաւ ժողովուրդն 'ի Դանայ մինչև ցԲերսաբէէ իբրև զայր մի » . և դարձեալ ասէ . « Ահա եկեղեցի մարգարէից մարգարէացելոց , և Սամուէլ կայր 'ի վերայ նոցա » : Եւ օրհնեաց Սողոմոն զեկեղեցին , և լու եղև բանս այս յականջս եկեղեցւոյն . և եկեղեցիքն հաստատէին 'ի հաւատս , և լուար զպատգամն զայս 'ի միջոյ հրոյ յաւուրն եկեղեցւոյ . քանզի զեկեղեցի արար

զլուխ մարգարէին Մովսէս զցեղն Իսրայելի հրամանաւ Աստուծոյ. “Եկեղեցացո՛, ասէ, զժողովուրդն 'ի դուռն խորանին վկայութեան,,:

Տեսանեմ զի ոչ եթէ զխորանն կոչեաց եկեղեցի, յորում կայր արկղն կտակարանաց, և մեւս խորանն որ կոչէր սրբութիւն սրբութեանց, այլ զհաւատացեալ ժողովուրդն կոչէ եկեղեցի: Վասն այսորիկ ևս առաւել բարձրագոյն և առաքեալն Պաւղոս նորագոյնս նիմն և յաւէտ հրաշալիս. քանզի ցուցանէ զեկեղեցի անդրանիկաց գրելոց ոչ յերկրի՝ այլ յերկինս. որոց անուանքն գրեալ են 'ի դպրութիւն կենաց:

Տեսէ՛ր զՀշմարիտ հիմն եկեղեցւոյ. վասն որոյ փրկիչն ասաց խնդալ զառաքեալսն, թէ “Խնդացէք զի անուանք ձեր գրեալ են 'ի դպրութեան կենաց,,. և զանապական՝ որ սկիզբն կալաւ չինելոյ յերկրի՝ որ անցանելոց է, և աւարտեցաւ 'ի կատարս բարձրութեան երկնից:

Այս է խորհուրդն եկեղեցւոյ.

զայս ուսաք ասել կաթողիկէ առաքելական եկեղեցի. զի ըստ ամ տիեզերս հաւատացեալք 'ի Քրիստոս առաքելական յորջորջին եկեղեցի, վասն սէրուռնական հրամանին որ առ Նոսա՝ թէ «Գնացէք ըստ ամ երկիր, աշակերտեցէք զամ հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զոր ինչ պատուիրեցի ձեզ»։

Գ. Արդ թէպէտ և փոքր 'ի շատէ ասացաք յօրինակացն, որ բազմապատիկ կան 'ի գիրս սուրբս վասն եկեղեցւոյ սրբոյ. քանզի յայտի եղև անքակ միութն, և ոչ երկպառակեալ, որպէս կամեցան պատառումն առնել և կռիւս վաղվաղակի տիմարուք Լուրեանց. զի 'ի Ճշմարիտ հօտէս Քրիստի որ է եկեղեցի Ա՛յ՝ նա միայն է պատառեալ և անջատեալ՝ որ 'ի հերձուածս կործանի և մեղաց լինի պաշտօնեայ, զի մեղք միայն բաժանեն և օտարացուցանեն յԱ՛յ։ Բայց զայս ասելով մեր՝ զանբաժանելի միաւորութն եկեղեցւոյ յայտ արարաք թէ զինչ է եկեղեցի. այլ ոչ թէ

արհամարհել ինչ ուսուցանեմք ըզ-
շինուածովք պատուեալ տեղիսն,
որ անուանին ժողովարանոցք. քան-
զի 'ի նա ժողովին քահանայք և ման-
կունք ուխտի և պաշտօնեայք ԱՅ՝
կատարել զաղօթս և զնդրուածս,
վայ և աղօթարանք կոչին և արբա-
րանք. և հատատեալ կայ 'ի նոսա
տէրունական սեղանն յորոյ վերայ
զհացն և զգինին պատարագեմք,
յօրինակ* կենդանարար մարմնոյ և
արեանն Քրիստի, որ միշտ անծախապէս
բաշխի 'ի մեզ 'ի քաւութիւն և 'ի թողու-
թիւն մեղաց. և 'ի նոսա կայ ուղղեալ
աւազան մկրտութեան. որով լուսաւո-
րեալ վերսին ծննդեամբ հոգւոյն
արբով, դրոշմիմք 'ի յոյս կենացն
յաւիտենականաց. և հանապազ
անդր գումարելով լսեմք սաղմոսերգ-
գութիւն և զպատգամս պատուիրա-
նացն ԱՅ. և զի միշտ անդր ժողո-
վիմք, և ապաւէն ապաստանի է մեզ,

* Օրինակ նշանակէ ասա խորհուրդ իբր յարացոյց և խկութիւն իրին, այս ինքն պատարագին Քրիստոսի. որպէս և Հայրք Ցունաց 'ի կիր առին 'ի սոյն միտս զ.ՏՍՊՕՏ որ է տիպ կամ օրինակ։ Յորմէ արդ զգուշալի է, վասն նորագանդից կամակորելոց զայն 'ի մոլար միտս։

զամենայն ասացեալս 'ի նմա կատա-
րելով, սովորութիւն եղև եկեղեցի
անուանել յարանուանաբար և ոչ
բնաւորապէս ։

Եւ քանզի բազումք այսպէս կան
վկայարանք՝ ուրեք ուրեք յանուա-
նէն Ճանաչեմք եթէ համանուն նո-
ցա են շինեալք . այլ ոչ եթէ ին-
քեանք իսկ յորոյ անուն շինեցան . և
մի պատիւ է ամենեցուն զի մի խոր-
հուրդ կատարի . քանզի սեղանն
ամենայն ուրեք տէրունական ասի և
պատարագն . բայց միայն տօնիւքն
զանազանին . զի իւրաքանչիւր տեղ-
ւոջ սովորութիւն է կատարել ըստ-
կարդ տօնիցն ։

Դ . Արդ արժանաւոր է զառա-
ջին Ճառ բանին յիշատակել՝ թէ
ո՞րպէս կամ յի՞նչ պատճառս շինե-
ցան վանք . քանզի այսմ ոչ եթէ
Հայոց միայն ազգս կալաւ փոյթ
յանձին , այլ և Յոյնք , և Հռոմք ,
և Ասորիք , և այլ ամենայն ազգ 'ի
Քրիստոս հաւատացելոց . զոր և
Երիցս Երանեալն քաջ նահատակն
Քրիստոսի Գրիգորիոս՝ կատարեաց

շնորհելով նմա 'ի հոգւոյն սրբոյ զօ-
գուտ մատակարարութիւնն : Քան-
զի բազմապատիկ օգտի է առիթ և
սիւն հաստատութեան ճշմարտու-
թեան ուխտի մանկանց , զի փայ-
փայէ և թեւակոխէ 'ի հրահանգս
հոգեւորս , և զորս ամենեցուն քա-
հանայից և ժողովրդականաց պարտ
է յարգել և մեծարել զվարդա-
պետս , և միանգամայն իսկ զամե-
նայն պաշտօնեայս ուխտի՝ որ ա-
ւանց տարակուսանաց անդր մատ-
նեն յընդունելութեան կամաւո-
րական :

Վասն այսորիկ և դիսպոլագոյն է-
գաւ անուն վանք . զի անտրտում
որոյ պիտոյ է տացին , և ոչ միայն առ-
օտարս է օգուտ նոցա յաճախեալ՝
այլ առաւել ևս գեղջն յորում շի-
նեցաւ . քանզի օրէն է նոցա սփո-
փել զհիւանդս և մխիթարել ըղ-
ձալուրս : Եւ որք ամուսնութեան
են պարապեալք քահանայք՝ բա-
զում անգամ պատաղին 'ի մշակու-
թիւն , և կանանց իւրեանց հնարին
լինել հաճոյ , որպէս առաքելական

իսկ Ճշմարիտ է բան. իսկ 'ի վանեալն բնակեալքն կուսութեամբ են պարկեշտացեալք՝ միշտ մարտնչելով ընդ ախտին զոր բնութիւնն վառեալ բորբոքէ. և անյապաղ զպաշտօնն կատարեն և զկարգ. զնաղալութիւն խնդրելով ամենայն աշխարհի, և զդեղջն շինութիւն և զառողջութիւն 'ի տուէ և 'ի գիշերի ամենայն արթնութեամբ։ Վասն այսորիկ ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց՝ սահմանս ընկալաւ և անդս, և զերիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբութեան եկեղեցւոյ։

Ե. Արդ ամաչեսցեն ոք յանդգնեցան տխմարութիւն և անզգամութեամբ իւրեանց այլ զոմն ասել զեկեղեցի, և այլ զվանս. քանզի յայտնի եղև անբաժանելի միութիւն անդամոց եկեղեցւոյ 'ի Քրիստոս հաւատացելոց. «Զի անդամք եմք միմեանց 'ի շինութիւն հաւատոց սիրոմն Աստուծոյ»։ Նոյնպէս և ժողովրդանոցք և մատրունք՝ զոր սովորութիւն եղև 'ի վաղնջուց հե-

ան կոչել եկեղեցիս. թէպէտ և բազում է ըստ գիւղից գիւղից և քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումք 'ի բազումս բաժանեալ. այլ մի և նոյն խորհուրդ կատարի յամենեսին. և ըստ խորհրդոցն ոչ ասի ոմն մեծ 'ի նոսա և ոմն փոքր, այլ ըստ աստիճանին իշխանութեան. և այնպէս յարմարեալ, և բազում փութով պարտ է 'ի նմին մշանջենաւորել. քանզի ոչ եթէ 'ի մարդկային կարծեաց է ճառեցեալ սահմանադրութիւնս, այլ յաստուածաշունչ գրոց երկրորդեցաւ 'ի մէնջ բացորոշաբար. և որ հակառակին կան, ոչ մարդկան՝ այլ Աստուծոյ հրամանին կան հակառակ. և որ կամին կալ հակառակ՝ անձանց դատաստան ընդունին:

Զ. Արդ պարտ է մեզ զհատուցումն շնորհից սահմանադրելով հաստատել յայտարարութեամբ՝ թէ ո՞րպէս պարտ է հատուցանել 'ի վանս և կամ ամուսնացելոց քահանայից: Տօն սրբոյն Յովհաննու Մկրտչին և վկայի, զոր նախակար-

դեաց առաքեալն և խոստովանողն
Քրիստոսի, և հայր վերատին նորոգ-
ման բոլոր հայաստան աշխարհիս
Գրիգորիոս՝ 'ի վանս, զի ուխտա-
դրութեան պահօք հաստատեցաւ,
և որ ինչ միանգամ այլ ուխտք են
'ի վանս կատարեացին. և շաբաթք,
և պահք, և ծոմք՝ զի ուխտից են
կատարմունք, զի ուխտաւորեալ են
բնակիչք, շնորհիւ ուխտին կերա-
կրեացին: Եւ ասն ամենայն մարտի-
րոսաց զոր մատրունս կոչեմք: Վար-
դավառին մատաղենիքն միայն պը-
տուղ յամենայն արմատաց քոռ քոռ
'ի ժողովրդականաց և յամուսնացե-
լոց քահանայից յառաջին արմատաց
այս ինքն յընտրոցն. զի զեղցին կալք
ցորենոյ և հնձանք գինւոյ և իւղոյ,
և մի՝ 'ի վատթարացն խրիև զկային,
գուցէ զնորին լուսոյցք զպատուհաս:
Տօն սրբոյ յայտնութեան և քառաս-
նորդք նորա, և տեառն ընդառաջն,
և առաջաւոր պահոցն կատարումն:
Տօն միջնոց քառասնորդացն զատ-
կի, օր Ղազարու, մեծ հինգշաբա-
թի զատկին, յորում կենարարն

մեր աւանդեաց աշակերտացն զնոր-
հուրդս նորոյ ուխտիս։ Երկուշա-
բաթի զատկին ընծայիւք և հաճոյա-
կատար օժտիւք դիր զատկին. ոմն
համբառնալոյ տեառն յերկինս.
ոմն վախճանելոյն յելս հրոտից ամ-
սոյ։ Այսոքիկ ոմնք 'ի վանս ուխ-
տաւորեալ տեղիսն երթիցէ նա-
խանին հանապազ. զի կերիցեն պաշ-
ոմնեայք տեղւոյն և հիւրք, զի քա-
հանայից Թէպէտ և ամուսնացեալք
լիցեն և աբեղայից և ամենայն ուխ-
տի մանկանց չէ արժան 'ի շէնս
օթեալ՝ այլ 'ի վանս. բայց եթէ ուր ոչն
դուցեն։ Եւ կողոպուսն վախճա-
նելոյ տանուտերանց 'ի տախտէ և
յաթոռոյ, մինչև ցոնակ և ցդրդալ,
և որ լինչ անձին զգեստն է մինչև
ցկօշիկս և ցգօտի, և անկողինն՝ եր-
թիցէ 'ի վանս. զի հանդիցեն 'ի վե-
րայ նորա այնր մտեալ հիւրքն և
օրհնեսցեն։

Է. Ագարն որ մատնակատաւ է՝
կէս կաշոյն երթիցէ 'ի վանսն, և եր-
կու մասունք ճրագուին. իսկ քա-
հանայիցն բովանդակն, և ոչխարին

մորթն , և դմակն անդամոնքն , և ծրագուն և խախացոցն . և պան-
դուխտք որ 'ի տունս քահանայիցն են և նոցին եղբարցն՝ նոյնպէս տա-
ցեն , և զամենայն պատարագս հա-
տարակաց՝ կերիցեն պաշտօնեայք
բազում մեծարանօք , և եղբարք
հաւատացեալք . և զհաց տօնին որ
էանցն առ հատարակ՝ կերիցեն ամե-
նայն պաշտօնեայք , նոյնպէս և ըզ-
հաց ապաշխարողացն զոր յաւուրս
քառասնորդացն առնեն հանդիստ՝
շաբաթու կամ կիւրակէի :

Ը . Բայց պատարագն որ 'ի վանս
կատարին , երախայրիքն , եթէ ա-
նապատ լցէ՝ դեղջն անդր տա-
ցեն . ապա թէ ոչ՝ ամուսնացելոց
քահանայիցն տացեն . քանզի չէ
օրէն ունելք զհան տեառն 'ի յարկ
յիւրում տանն թողուլ : Իսկ ամուս-
նացելոց քահանայիցն եղիցին տօնք
շաբաթն զատկին , և զատիկն տուրբ ,
և երկրորդ զատիկն , և յերկրորդ
զատկէն 'ի վեր կիւրակէքն ամենայն ,
և տօն սրբոյ աստուածածնին և վար-
դավառին , բաց 'ի մատաղենեացն ,

որ է կատարումն քառասնորդացն առաքելական ոճնիցն հաւատացեալոց զատկին, և զպտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ, և պատարագք որ մատնականաւ են կէս կաշոյն և Ճրագուին զերկու մասունս 'ի վանս Թողլով զպաշտման և զլուցմանն, զմին տարցին զլուցման մասն, և որ ոչխարաւ է դմակն անդամոնքն և Ճրագուն, և խախացոցն, և մորթն. և զգեստն միայն տանտիկնացն վախՃանելոց: Եւ ոճնք բարեկենդանին և ողոգոմեանն մեծ՝ որ Թարգմանի բարեբանեալ օր, և Թէ այլ ոճն ոք կատարեսցէ յանուն առաքելոց և մարգարէից, հատարակաց եղիցի. զի այնպէս անեկեղեցական և առանց հակառակուԹեան պաշտօնէիցն կացցեն դասք, գիտելով որ՝ ամ շնորհի արժանաւորք եղեն. զի պարկեշտուԹեամբ և ուսումնասիրուԹեամբ վարեսցին, և մի եղիցին բանակռիւք, այլ սիրունք արԹունք և զուարԹունք յամենայնի. զի բաւական լիցին խրատել զատահական, և զյուլացեալսն ածել 'ի

կարդ հաւատոց. քանզի այդ գործ է վարդապետի և հոգևոր հովուի։

Յիշատակարան Գրչի

Այս սահմանադրութիւն կարդաց գրեցաւ հրամանաւ սրբոյն Սահակայ մեծ հայրապետին հայաստան աշխարհի, ընկալեալ 'ի քաջ նահատակէն 'ի տեառնէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն Յունէ 'ի Հայս։ Արդ եթէ ոք անհնազանդեալ կանոնիս նորաձևեալ կամեցի զկարգեալ սահմանադրութիւնս, մի ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան յարքայութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և որ ոք միաբանեալ կատարեսցէ՝ ընկալցի զօրհնութիւն 'ի տեառնէ՝ հաղորդելով պարգևացն և անվախճան հանդերձատեանն երջանկին Գրիգորի և հօր մերոյ Սահակայ, և նոցին հետևելոց ճշմարիտ ուղղափառութեանց, որ 'ի մեծ և յերևելի ա-

ուրն են պատկերոց յամենաբաւա-
կան աջոյն՝ անթարգմանելի պայծա-
ռութեամբ մշանջենաւորեալք յա-
ւիտեան, և յաւիտեանս յաւիտե-
անից. Ամէն։

ՆՈՐԻՆ

թէ ո՞րպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զգանձս եկեղեցոյ, կամ որոց ո՞րպէս մատուցանել.

Ա. Նաւահանգիստ է ամենեցուն, տաճար աղօթից և տեղի խնդրուածոց մերոց, զոր յարանուանարար եկեղեցի սովոր ենք կոչել. ունելով յինքեան նաւապետ կարգապետութեան զտեսուչ եպիսկոպոսն. զի խնամոտ և արդիւնակատար կամօք անշարժ ունիցի զսահման իւրոյ կարգին. վասն այսորիկ առ հասարակ 'ի Քրիստոս հաւատացեալք ապաւէն ապաստանի ունին զսուրբ եկեղեցի. զի արդարոց է նաւահանգիստ, և տեղի յուսոյ փրկութեան մերոյ, և իւրաքանչիւր ոք փութայ սրտի յօժարութեամբ

զուխտս և զպատարագս և զընծայս
իւր մատուցանել։

Բ. Իշխանք զգեղս և զդատա-
կերտս և զդանձս ոսկւոյ և արծա-
թոյ, այլք յանդատանաց և 'ի
պաճարաց և 'ի հանդերձից պա-
տուականաց, ոմանք վասն անձանց
փրկութեան, կէսք յաղագս սիրե-
լեաց և ծնողաց, և զվախճանելոց
հատուցանել զհատուցումն, զարդ
և պայծառութիւն կազմելով հոգ-
ւոց և մարմնոց. քանզի անսայթաք
յորդորութեամբ տէրունականն
բան զգուշացուցանէ ծառայից և
պատուիրանապահաց իւրոց, թէ
«Գանձիցէք ձեզ գանձս յերկինս,
ուր ոչ ցեց և ուտիճ ապականեն, և
ոչ գողք ական հատանեն և գողա-
նան». և եթէ «Դատարկաձեռն
ամենևին մի երևեսցիս առաջի իմ».
չէն, ասէ, այդրէն յերկրիս իւրա-
կան տուրքդ ձեր, այլ 'ի կատարս
բարձրութեան երկնից յանսխալ և
յանվրէպ գանձարանին։

Գ. Տեսանեմ զի Աստուծոյ են
ինչքն. քանզի իւր համարի զտուրան

մեր, և ոչ մարդոյ ումեք. բայց միայն
պահապան և վերակացու է և առ-
սուչ եպիսկոպոսն։ Բաղում զգու-
շութեան պէտք են եպիսկոպոսի
և երկիւղն. զի թէ ոք զմարդկան
աւանդս կամ զպարտս հոգան, և
աշխատութիւն կրեն, ըղձանալով
թէ ի՞նչ վճարիցեն, և դէպ լինիցի
փոքր ինչ ծախել՝ գիր առնեն և
վկայս կացուցանեն և երդումն, զի
մի երևեսցին թեւրքևգողք՝ ի գործս
իւրեանց։ Իսկ Աստուած՝ որ քան-
նիչ է խորհրդոց մերոց, և չիք ինչ
նմա 'ի ծածուկ, այլ ամենայն ինչ
մերկապարանոց կայ առաջի աչաց
նորա, զինչ պատճառս և հնարս
հնարեսցի եպիսկոպոսն՝ յորժամ
զաւանդն արքունի՝ զգուշութեամբ
ոչ պահեսցէ, և ծախեսցէ այնոցիկ
որոց ոչ իցէ օրէն. այսպիսի ինչ
յորժամ աւելի զգեստիւք զինքն
պճնիցէ և փերևեսցէ սիգութեամբ և
փառիկութեան պարապելով, և աղ-
գականացն զերծուցու և տացէ, և
զկատակն պարարիցէ զօրէն խշ-
խանաց, և բարեկամս աննմանիս

յաՃախիցէ, և շնորհուկս առնելով Ճոխաց և մեծատանց տացէ, այն է չարաչար վատնել զարքունիսն, և պատժոց լինել արժանի։

Դ. Առաքելական պատուոյ եղեալ արժանի, պարտի՛ս և վարուց նորա նմանել՝ որպէս և դիրք դործոց առաքելոցն վկայեն. «Բաշխեցին ամենեցուն՝ ուստ զիարդ պիտոյ ինչ լինէր»։ Զի դանձ ասուածային որում տեսուչ և մատակարար կաղմեցար՝ նեղելոց, և որբոց, և այրեաց տուաւ ապաւինութիւն, և եթէ միանդամայն ինչ աշխարհի վտանդ հասանիցէ. բայց յայլ իրս ամենևին չէ իշխանութիւն ծախել. զի յաղագս հոգւոց փրկութեան տուան դանձքն։

Ե. Արդ եթէ ոք յայլանդակս ծախիցէ՝ ընդ սեղանակատուսան դատ տացէ յաւուրն դատաստանի, և պատիւն բարձցի 'ի նմանէ. զի թէ ժամանակաւոր թագաւորացս դործակալք յանկրաւ իրս ծախելով զարքունիսն՝ պատիժս կրեն և 'ի պատուոյն 'ի բաց անկանին, ո՛ր-

չափ ևս առաւել ոչք զաստուա-
ծայինսն վասնեսցեն յանուղղայս՝
կրեսցեն պատիժս ասա և 'ի հան-
գերձելումն. և եթէ ոչ աչառիցէ
այնպիսեացն Թոյլ տալով՝ կցորդ
եղիցի չարեաց գործոց նոցա։

Զ. Բայց և դու, ով մտացի հա-
ւատացեալդ, որ յաղագս մեղաց
քոց փրկութեան և ուխտից զտուրս
քո տաս, զի 'ի բաց ընկեսցես ըզ-
ծանրութիւն մեղաց քոց, և զայլոց
բազմաց նոյնպէս գիտիցես։ Ընդէ՞ր
աՀասարես զընկեցեալ տապտակալի
բեռինսն այդրէն առնուլ։ Վասն
որոյ մարգարէն զսոյն իսկ ասաց՝
Թէ «Որպէս բեռն ծանր ծանրա-
ցաւ 'ի վերայ իմ»։ և երանի՛ Թէ
զքոյին իսկ զբեռն առնուիր, և ոչ
զայլոցն. զի որչափ զառնուլն յա-
Ճախես քան զտալն, զմեղացն քոց
ասասկացուցանես զբեռինսն, զի
զայլոցն ևս ընկեցեալս 'ի վերայ քո
մթերես։

Է. Յօրէնսն՝ և զընկերին զգրասան
անկեալ ընդ բեռամբ՝ չհրամայէ
անտես առնել, այլ յարուցանե-

լով յարուցեալ, ասէ տէր, և դու զանձնդ գլորեալ անկանդնելի խորտակմամբ. զի թէ զայլ ոք տեսանէիր խորտակեալ, կամ անկեալ և բեկեալ, թերեւս ողորմէիր. և զքեզ անտես առնես. յաւիշտակես, զլանաս զորբոյն, զայրւոյն, զաղքատաց զվարձս, կողոպտես զսեղանս, և դարշել պատճառես 'ի մեհենեաց:

Ը. Արդ քեզէն տուր զիրաւդ. ոչ ապաքէն մինչ տաս զտուրսն 'ի տունն Աստուծոյ, այս է, զծանրութիւն մեղացն ընդ նմին հաւատաս 'ի բաց ընկենուլ. և յուսաս յաւիտենական կենացն լինել արժանի: Ապա ուրեմն և առնուլն՝ հակառակ զնորին մեղացն զբեռինս այդրէն 'ի քեզ կուտէ, և մշանջենաւոր տանջանացն լինի առիթ. զի՞նչ օգտիցէ այսպիսի շահ՝ որ զանձն իւր տուժէ և կորուսանէ, և ոչ գտանէ փրկանս անձին իւրում. լուր աստուածային գրոցն և ուսիր բարեմտութեամբ, որոց վայելել հրամայէ այնու ընչիւք. «Սե-

զանոյն պաշտօնեայք, ասէ, 'ի սե-
զանոյ անտի վայելեն ,,: Եւ զինչ է
կերակուրն. "Զմեզս ժողովրդեան
իմոյ, ասէ, կերիցեն ,,. վասն այ-
նորիկ ազգէ պատրաստել թէ
"Արիք, մինչ չև էք ենչեցեալք, որք
ուտէք զհաց ցաւոց ,,:

Թ. Տեսանեա՞ զզօրութիւն կերա-
կրոյն. քանզի և այլուր յայտնագոյն
զգուշացուցանէ քեզ զպակնուելն
հրաման տալով, թէ "Հպատակ կա-
ցէք նոցա, զի նոքա տքնին վասն
ոգւոց ձերոց, որպէս զի համարս
տալոց են ընդ ձեր ,,: Արդ ընդէր
զայսպիսի ծանրութիւն ձգես 'ի
քեզ և զտոյժս անհնարինս, որ ըզ-
կէս գիշերին թերևս արբեցութեան
պարապիցես. թողում՝ ասել զայլն
եւս յորսացեալանկեալ պարպասի-
ցեն ընդ երկ թասելով և թառանչե-
լովք, և 'ի պղտորութենէ որովայ-
նին յոլձանաց և սաստիկ գոլո-
շեացն, որ և զձայն անգամ լսել
զպաշտման դժուարանաս, թող թէ
հսկել և տքնութեան պարապել:

Ժ. Արդ որպէս թերի ես 'ի վաս-

տակոցն աշխատութենէ, հեռանալ պարտիս և 'ի վարձուցն յափշտակութենէ, և քոյոմն շատանալ. դուռ աւադիկ զանց արարեալ զճառեցելովդ՝ որբոց, և այրեաց, և անանկաց ևս քուքալ կամիս տալ զինի քո. քանզի յաղագս նոցա սպասաւորութեան է դանձն աստուածային, որպէս վերագոյն ասացաք. զի նոքա մանաւորեն. «զորբս և զայրիս ընդունի տէր». և եթէ «աչք նորա 'ի անանկս հային, և կարդայցեն առ իս և լուայց նոցա»։

ԺԱ. Արդ ընդէր և զնոսա ևս կացուցանես քեզ ոսոխ, և չամաչես զտուրս զհացիկն թէ ունէիր առաջի քո՝ դարշէիր, թերևս և անարգանս համարէիր զառնուլն, և զինչն անիսղճաբար կորզես, և ոչ կասկածես թէ հաւասար է այս մուրոյ, ուր նոքա կողկողին զտառապանս և զնեղութիւնս և զվիշտս իւրեանց պատմելով. մինչև ցամաքին լեզուքն 'ի բերանս առ վառանդին. զվերս և զնեղութիւնս մարմնոյ մերկացեալ ցուցանեն երիթացեալք, ըստդ-

դղեակք գոլան սարսռին՝ զի գէթ այնպէս խուն ինչ գտանել կարասցեն ծածկոյթ առնել առականաց իւրեանց. և գու նանիր և դրուատեալ բանիւք զնոցայն շոպելով 'ի մուռացօնս կամիս դարձուցանել. զի փուլթաս այրի առնել զկին քո, և որբ զորդիսն, մուրող և թափառական. զի կողկողին առ գուրս վատթարաց, և ապա յիշեցէք զբանն տեառն Յիսուսի, թէ «երանելի է տալն մանաւանդ քան զառնուլն»։

ԺԲ. Վասն որոյ աղաչեմ և վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս 'ի յայտնութեան իւրում և յարքայութեան, զի մի ումեք եղիցի թերի գտանել 'ի մասինս յայսմիկ՝ զոր պատուէր տալով ուսուցաք զօգուտն հոգւոց և մարմնոց. և զինչ օգուտ մեծագոյն քան զայս կացցէ կամ զուարճացուցանող խնդութիւն, յորժամ եպիսկոպոսն ըստ Աստուծոյ հաճոյեցն խնամ տանիցի եկեղեցւոյն, և դասք պաշտօնէից գովութեամբ

յորդորեալ զսաղմոսն գեղգեղելով հնչեցուցանիցեն. և այլքն առ հասարակ գումարեալ փառս տացեն ամենայաղթ աէրուլթեան, որքք և այրիք յանձանձեալք, աղքատք խնամեալք, անանկք յաղագս հոգացեալք: Այսպիսի կարգ լինի բաւական բանալ զողորմութեան ըզդրուն. երկինք անպարապ լինեալով ցօղոյ, և երկիր ցորենոյ, գինւոյ և իւղոյ, պաճար անասնոց դալարազարդութեամբ և բոլորովին իսկ ըզձալի կենցաղ խշխանաց և թագաւորաց մշանջենաւոր խաղաղութեամբ շնորհօք և մարդասիրութիւն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում՝ հօր՝ միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք խշխանութիւն և պատիւ այժմ և հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՆՈՐԻՆ

ԳԻՐ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ Եկեղեցւոյ և պտղոյ ժողովրդականաց ընծայելոց 'ի տուն Աստուծոյ :

Ա. Քանզի սուրբ Լուսաւորիչն Հայոց մեծն Գրիգորիոս ծնեալ վերսին զՀայաստանեացս աշխարհ աւազանին ծննդեամբ, և ընծայեալ յորդեգրութիւն հօրն երկնաւորի զլուսաւորեալսն միրաութեամբ որ 'ի Հայր և յորդի և 'ի Հոգին սուրբ. և լինէր ուրախութիւն այնուհետև և խնդութիւն մեծ յաշխարհիս Հայոց սանս թորգոմայ, մանաւանդ թագաւորն և պայծառացեալ հաւատով Տրդատ՝ ոչ սակաւ տայր օժիտս

մերձակայից իւրոց սպասաւորաց, և որդւոցն քրմաց պարգեւէր բազում պարգեւս, ասելով թէ անդէն հաբիւրապատիկ առնուցուք ինչս, և ստացուածս, և երախայրիս և պըտուղս 'ի սուրբ եկեղեցւոյ Աստուծոյ. և 'ի հանդերձելումն զկեանս յաւիտենական ժառանգիցէք, զերծեալքդ 'ի պաշտամանէ կռամոլ դիւցազաշտութեանցն:

Բ. Իսկ նոցա պատասխանեալ ասեն ցթագաւորն և ցսուրբն Գրիգորիոս, թէ Աստուծոյ բարերարի և մարգասիրի ոչ անտես արարեալ զստեղծուածս անարատ ձեռաց իւրոց՝ արդ զթացեալ ծանոյց մեզ շնորհօք ձերովք զբարերարութեն իւրոյ զանչափ զօրութիւն, և զանհամեմատ խնամակալութեանն զողորմութիւն, և ոչ եւս թոյլ ընդհարս մեր կորնչել յանօրէնութեան մերում. եղիցի անուն նորա սուրբ և փառաւորեալ յամենայնի: Այլ ասկայն մարմնաւորական կարիք, որչափ եմք 'ի կենցաղումս յայսմիկ, սոիպէ զմեզ ըստ պէտոյիցն տալ

զդալման կերակրոց և զզգեստուց, և զայլոց կարեացն չափաւորապէս. և ոչ ունիմք արուեստս գործակա-նութեան հնարիլ ինչ առ 'ի պա-տրաստել նոքօք զպարէն ուռճկաց մեզ և որդւոց մերոց: Քանզի ցոր-չափ ծառայէաք դիւաց՝ կերա-կրեալ լինէաք 'ի զոհից և 'ի պաղոց նոցա. իսկ այժմ ոչ են մեզ յայտ պատուղք ընծայից որով կեցցուք մեք հանդերձ ընտանեօք մերովք, և փառաւորեսցուք զկենդանին յա-ւիտենից զանմահն Աստուած:

Գ. Յայնժամ երանելին Գրիգո-ր ասէ զնոսա. Դուք, որդեակք իմ, զորս վերատին ծնայ սիրոմբ Քրիստոսի, միայն զգուշութեամբ ծառայեցէք Աստուծոյ կենդանւոյ և Ճշմարտի, և զյոյսն ձեր դիջիք 'ի նա բոլորով սրտիւ, զվերինն խոր-հիջիք ուր Քրիստոսն նստի ընդ աջ մէ հօր. զայն օթևանս և զբնակու-թիւն և զկեանս խնդրեսջիք 'ի տեառ-նէ, և այս յաւելցի ձեզ ըստ գրե-ցելումն 'ի տեառնէ Աստուծոյ մեր-մէ 'ի սուրբ աւետարանին Լուքայ,

իսկ պատուղք ընծայից սրբութեան
սաճարի Աստուծոյնուիրեալք՝ ձեղ
եղիցին օրհնութիւնք 'ի ժողովրդոց
վիսիանակ պիղծ զոհիցն այնոցիկ,
որոկք հաղորդեալք լինէիք դիւաց.
այժմ սուրբ պատարագացն երա-
խայրիք և այլոկք ընծայեալ պողովք՝
հրեշտակաց սրբոց հաղորդք գոտ-
նիցիք շնորհաց Քրիստոսի. և եղի-
ցին ձեզ պատուղք և երախայրիք կար-
գեալ ըստ այնմ օրինակի՝ որպէս և
մեծ մարգարէն Մովսէս առեալ
հրաման յարարչէն աւանդէր ժո-
ղովրդեանն զպատարագացն և ըզ-
պտղոցն՝ զոր զևտական քահանայ-
ութեանն միշտ մատուցանէին հար-
կաւորապէս ընծայս՝ վասն ոչինչ
խափան լինելոց նոցին քահանայիցն
'ի ստատաւորութենէ խորանին վը-
կայութեան։

Դ. Սոյնպէս կարգեալ և սահմա-
նեալ եղիցի նոր ժողովրդեանս ըն-
ծայաբերութիւն 'ի սրբութեն սրբու-
թեանցս՝ որ 'ի սեղանն մաքրութեն.
զի և բոլոր արմոնիք կալոց և հնձանի
և այլոց պտղոց օրհնեացին, և տայցեն

անդ. և այդ՝ ծառով պտղաբեր-
ութիւն զշահեկանութիւն պտղոց՝ ըստ
Խմաստնոյն բանի որ ասէ. «Ի պա-
տուել քո զտէր յարդար վաստակոց՝
լցցին շտեմարանք քո լիութեամբ
ցորենոյ, և գինեւոք հնձանք քո յա-
ւէտ բղխեսցեն»։ Եւ որպէս զեւ-
ռացեալն տասանորդէին քահա-
նայիցն, թէպէտ և ինքեանք առ-
նուին տասանորդս յամենայն խրայ-
ելէ, այլ և նոքին տասանորդս մա-
տուցանէին քահանայիցն յամենայ-
նէ, և զփրկանս անդրանկաց ամե-
նեցուն հատուցանել հրամայէր 'ի
սրբութիւն տեառն։ Կովին օրինա-
կաւ և գոչ առնիջնք յամենայն ժո-
ղովրդենէն, հասքն ձեր եղիցին
'ի պատարագաց կաշի, և աջոյ երին.
անդամ և ճրագու, և դմակ, և
սկրա, և լերդաբոյթ, և երիկամունն
ճարպովն, 'ի կողից և 'ի խոտոցաց
մատն լեզուն և աջոյ ունկինն, շըր-
թունքն հոտոտելեաքն, և աջոյ ակնն,
և ամենայն խորհրդական մասունքն։

Ե. Իսկ 'ի կալոյ և 'ի հնձանէ և
յայլոց արմտեաց՝ տասանորդս հան-

ցեն իւրաքանչիւր ոք ձեզ, յաղագս մաքրելոյ ամենայնի արդեանց՝ և աՀ ման ամենայնի պատՀառ լինելոյ։ Այլ և 'ի ձէնջ եղիցին ընծայք 'ի սեղան Աստուծոյ՝ ուստի արժանի է ղէք նախ ընդունել զանարատ և զանարատական մարմին և զարիւն Փրկչին մերոյ յիշատակ փրկութեան ձերոյ, որպէս և զեւառացւոց քահանայութենն հրամայեցաւ յայնժամ Մովսէսիւ 'ի տեառնէ։ Եւ հասք 'ի ձէնջ 'ի սեղան տեառն եղիցի դրամ մի յամենայն տանց ձերոց, և նուիրեալքն 'ի ձէնջ և փրկութեան պատարագաց երախայրիք՝ երթիցեն 'ի վանս դլխաւոր քահանայիցն, այս ինքն եպիսկոպոսացն, որպէս 'ի ժողովրդոցն հարկին ձեզ հոգևորականն հարկս, այնպէս և դուք պարտիք հարկս հոգևոր հարկել եպիսկոպոսացն՝ որք կոչին այցելուք։ և նոքա մի խշխեացեն խորել, այլ հարկեացին յաղքատս ամենայն։

Զ։ Եւ արդ այսպէս կարգեցաւ 'ի սրբոյն Գրիգորէ, և 'ի մէնջ հաստատեցի նմանապէս յամենայն հա,

ւատացեալս անշարժ աւանդու-
թիւնն նորին սրբոյ. Ժողովրդականք
ամենայն զպտուղ և զերախայրիս
երկրացանց մատուցին անզեղջաբար
մուրք. զի եղիցին ընդունելի պատա-
րագք իւրեանց առաջի Աստուծոյ:

Է. Սոյնպէս և քահանայքն զա-
մենայն նախակարգեալ հասս հա-
տուցին եպիսկոպոսաց առանց
յապաղանաց, և մի՛ անկցին 'ի հեղ-
գուութիւն, մանաւանդ յափշտակել
հնարելով զաւանդ վիճակելոցն, զի
մի՛ դատապարտեսցին ընդ անօրէն
քահանայիցն յաղագս զոշաքաղու-
թեանն իւրեանց, և ոգէաք ոմանք
ըստ սովորութեան մի՛ եղիցին արդ-
ժանի՝ առնուլ հասս մտից, այլ ուս-
մանց պարապեալքն և շնորհի քա-
հանայութեան արժանացեալք՝ նո-
քա եղիցին արժանի հասից, և դը-
պիրք գրակարդացք սրբանեալք
ամենայն պարկեշտութեամբ՝ մի՛
զրկեսցին 'ի բաժնէ իւրեանց:

Ը. Բայց երկկանայքն՝ որ ամ-
նևին զցանկութեան մարմնոյ զհետ
չոգան, նոքա ոչ ունին մասնաւորել

շնորհի սրբութեանցն. իսկ կանայք երիցանցն այրիք մնացեալքն և սրբութեամբ պարկեշտացեալք՝ արժանի եղիցին մասին իւրեանց ըստ արժանաւորութեան հասին սեղանոյ և նուիրականաց ոմանց, և ամենայն ոք՝ որ մասնաւորեալ իցէ հասից և մասից սրբոյ եկեղեցւոյ՝ նոքին ոչ ունին իշխանութիւն խորել ինչ անձանց զհաս տեառն՝ զոր յինքեանց իցեն նուիրեալ. այլ 'ի գլխաւորսն վճարեսցին սիրով, և ընկալցին զօրհնութիւնս 'ի նոցանէ. զի կարգք եկեղեցւոյ հաստատուն և անշարժ եղիցին. և Աստուած փառաւորեսցի յամենայնի՝ այժմ և յաւիտեանս յաւիտենից։

ԹՈՒՂԹՔ

ՍՐԲՈՑՆ ՍԱՀԱԿԱՑ

ԹՈՒՂԹՔ

ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

Պատասխանի թղթոյն Պրոկղի ի Սահակայ եւ Մաշտոցէ տուրբ վարդապետացն Հայոց :

Առ ճշմարիտ եւ աստուածասէր պատուական տէր մեր եւ հայր տուրբ եպիսկոպոս Պրոկղոս , 'ի Սահակայ եւ 'ի Մաշտոցէ ողջոյն :

Ճառագայթք մշանջենաւոր յաւիտենական լուսոյդ՝ որ առ մեր ակարութիւնս երևեցաւ 'ի ձեր լուսաւոր սրբութենէդ , յոյժ 'ի ծադել իւրեանց զօրացուցին եւ մեծապէս զկողմն ակարացեալ անդրէն արծարծել նորոգեցին , զի անդրէն վաղվաղակի թռուեցաւ մեզ՝ որպէս նոր ինչ անցք 'ի վերայ հատանել

բազում՝ անձկալի գթոյն, զոր օրի-
նակ անդք անցանիցեն ընդ. քաղցրա-
բեր բոյսս արտոյն. քաղցրութեամբ
ցօղոյն 'ի վերայ ինչանելով և զտապ
տառապոյն հասկալից բուսոյն 'ի
ջերմախառն յանբարեխառն օդոյն՝
իւրոքն. քաղցրութեամբն յառող-
ջութեան բժշկութիւն դարձուցա-
նելով։ Արդ յայս վայր գեղեցիկ
ինն ցանկալի և ուխտիւք ինդրելի
էր մեզ լսել և ասել զզօրութիւն
թղթոյն 'ի միջի որ զերանելի պատ-
գամն 'ի ձէնջ առ մեզ հասուցա-
նէին, և մեր աղօթք հանապազոր-
դէին արժանի լինել ամենայնի ըն-
դունել և վայելել յօրհնութիւնս
հոգևորս ձերոյ մեծապանջ սրբու-
թեան. զի. քաղցրացեալ էր մեզ
կալ մնալ առաջն 'ի ամին ընտանե-
ցեալ ոգիտութեան, որպէս 'ի
բերդ ինչ ամուր և աշտարակ հզօր
փախստեայ անկեալք յանդիսուս-
տութեանս։ Արդ պահպանութիւն
զմեզ առեալ զօրհնականութիւն ա-
ղօթից ձերոյ սրբութեանդ, հաս-
տատեալք և զօրացեալք պահել

զհատատատուութիւն հաւատոյ, զոր 'ի սկզբանէ 'ի ձեր Ճշմարիտ վարդապետութենէդ ընկալեալ առնէաք մի պղտորութեամբ ընդունել 'ի վերայ մկրտութեան ոգիտութիւն պարզմտութեան մերոյ, և բնաւ ամենևին չընդունել զլուր կորստական մոլորութեանս. մանաւանդ զնեստակար նորաբան նորաձայն ըզհերետիութիւնս, զոր այլանդակաշատ ամբարշտութիւն տակաւին ըզբարս դառնութեան սերմանցն ցանէ 'ի վերայ սրբութեան սերմանեաց որոմնախառն ուսումն, որք 'ի հանճարաւէտս սատանայախառն սովորեալ են: Արդ որովհետև մոլարն առաջին և դլխաւորն 'ի կարիս զիւր ժանդ աղտեղութեանն՝ կարկառեալ սերմանել ժպրհեցաւ զայս՝ մեր մեղաց գործք համարեցաք, և ընդ մեծամեծ բաղում և անչափ ձերում թղթոցս տրամակից եղեալ ըստ մերում տկարութեանս ողբացաք, և յամենայն տեղիս որ շուրջ զմեօք բնակեալ էին յղեցաք մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի

ըսել բնաւ ամենեին զայդ վարդա-
պետութիւն բարբարոս, մի՛ ընդու-
նել ամենեին զվնասաբեր կորսուա-
կան մոլորական հերետիկութեան
վարդապետութիւնն։

Այլ մեք հաւատամք՝ ի մի Աս-
տուած հայր ամենակալ արարիչ
երկնից և երկրի, երևելի և անտեսե-
լի արարածոց։ Եւ՝ ի մի Տէր Յի-
սուս Քրիստոս՝ ի միածին որդին
Յիսուս, այսինքն է էութիւն յէու-
թեան էութիւն ծնեալ, որով ա-
մենայն եղև, Աստուած յԱստու-
ծոյ, լոյս՝ ի լուսոյ, ծնեալ և ոչ ա-
րարեալ, խակակից Հօր. որ վասն
մեր մարդկութեամբ էջ և մարմնա-
ցաւ, յանձն առ չարչարանս, յա-
րեաւ յերկից աւուրց և ել յերկինս
և դայ դատել զկենդանիս և զմե-
ռեալս։ Եւ՝ ի սուրբ Հոգին հաւա-
տամք։ Իսկ որ ասեն էր երբեմն զի
չէ, և մինչ չև ծնեալ էր չէր՝, և ա-
սեն զէութենէ եղև և յայլմէ իմա-
ստնէ զօրութենէ, և կամ՝ եղծանե-
լով և փոփոխելով՝ զայնպիսիսն
նզովեմք։ Զի միշտ հայր, միշտ

Որդի, միշտ սուրբ Հոգին, Հոգի Աստուծոյ Հոգի սուրբ, կատարեալ բարեխոս, անաստեղծ անեղծ, որ խօսեցաւ օրինաց և մարգարէից և առաքելոցք, որ էջն 'ի Յորդանան։

Եւ վասն մարգարէութեան Որդւոյ այսպէս հաւատամք, զի առ յանձն լինել մարդ կատարեալ սրբոյ Հոգւով, առեալ շունչ և մարմին ճշմարտիւ չարչարեցաւ։ Ոչ է թէ լինքն պարտ էր չարչարանաց, այլ վասն մեր էառ յանձն զչարչարանս, խաչեցաւ և թաղեցաւ և յերրորդ աւուր յարեաւ և յերկինս ամբարձաւ և ընդ աջմէ Հօր նստաւ, և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։ Այլ առ կատարման հաւատոյ հաւատամք 'ի մի մկրտութիւն ապաշխարութեան, և 'ի մի կաթողիկէ եկեղեցի, և 'ի յարութիւն մեռելոց և արքայութիւն երկնից և 'ի դատաստանն յաւիտենական։

Եւ Աստուած խոստովանիմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, մի աստուածութիւն սուրբ Երրորդութեան

թէն։ Զի հոգի է Աստուած և կամք
երևեալ, խօսեալ օրինօք և մարգա-
րէիւք և առաքելովք։ Հաւատամք
Հշմարտին անգիտութեամբ և ան-
հասութեամբ, զի ամենայն մարդ
ըստ պատկերի Աստուծոյ, այլ թէ
որպէս կամ զիարդ, Աստուծոյ
է գիտել։ Բայց զարմացեալ եմ
ընդ այնս որք աւելի քան զինքեանց
չափ ջանան և նկրտին ըմբռնել զան-
հաս զառանց ըմբռնելոյն։ Բայց
կարծեմք զայնպիսիսն իբրև 'ի մեր
ոգիտութիւն կարծեաց թէ այնպի-
սիք ոչ գիտեն ամենեին զգիրս և ոչ
զզօրութիւն Հոգւոյն որ 'ի գիրս է.
բայց եթէ հրէարէն միայն զմտքն
նկատեցեն, և որպէս գողացեալ հա-
մարիմք զնորա զմիտս 'ի թշնամւոյն,
զի արբեցեալ են զջար հիւանդու-
թեան արբեցութիւն. որոց 'ի բա-
զում և 'ի թանձր արբեցութենէն
զգայութիւն Հաշակեղեցոյն թարշ-
համեցուցեալ է, և ոչ Հաշակեղեցոյն
անգամ կարեն առնուլ զհամ գին-
ւոյն, 'ի բազում կիզմանն զայրու-
թէ զզգայութիւնն կորուսեալ է։

Եւ կամ զայս իմանամք 'ի կարծեաց մերում թէ 'ի զուր տարապարտուց է գիտութիւն բաղում ուսմանց, զի 'ի սատանայութիւն մոլորութեանն կործանեալ են, հասանել անհաս չափոցն ժպրհեն, զի ոչ ինչ է այլ գիտութիւն՝ այլ խաւար խորհրդեան և կամ կեղծաւորութիւն խրատանկութեամբ և գործ սատանայութեամբ: Երկուս որդիս և երկուս տաճարս մենքենայեն գտանել, ընդ միտս իւրեանց խորհել աներկիւղութեամբ և անամօթութեամբ, զամօթ իւրեանց ըրութեամբ յայտնապէս պատմեն: Զի և Տէր մեր Յիսուս Քրիստոս կամաք Հօր գթացաւ 'ի վերայ մոլորութեամարդկան: Բանն որ 'ի սրտէ Հօր բղխեալ, կամեցեալ հաճոյ առնել, հովանի լինելով սրբոյ Հոգւոյն, մարմին լինել յարգանդի Կուսին սրբութեամբ, և ընդունել զմարմին հնացեալ որ ըստ խաբէութեան սատանայի յապականութիւն դարձուցեալ էր, նորոգել մարմնով, ինչով և հոգւով, զի առանց ապականու-

թեան սահմանուածն առաջին 'ի միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց երևեցի. զի ճշմարիտ մարմին զդեցաւ վասն մեր և սերմանեաց 'ի մեզ հաւատով զաստուածութիւնն, և արար նշանս և արուեստս, զի նորա աստուածութեամբն հաւատարմացուք:

Ինքն յանձն էառ քաղց և ծարաւ, աշխատութիւն և քուն, իբր ոչ եթէ աստուածութիւնն 'ի մարմնոյն չարչարանաց 'ի պարտութիւն մատնեալ էր, այլ զի խցցէ զանամօթ բերանս, և անօրինութեամբ արեալ զլեզուս, որ արդէն իսկ յօժարեալ հայհոյութիւնս խօսել. որք ասեն ոչ ճշմարտութեամբ այլ կեղծեօք 'ի ցնորս առ աչօք երևելով դալուստն եղև: Համբեր յանձն առեալ ապտակս և անարգանս, խաչ և մահ, իբրև ոչ եթէ ինքն պարտական և արժանի էր յայսմ, և ոչ իսկ մահուան արժանի էր զոր մեռաւ, զի անմահ է աստուածութիւնն, այլ զի զմեր անարգանս որ 'ի մեզաց մերոց եղև արբով աւետարանաւ և

պատուական արեամբն ջնջել՝ի մէնջ
և լուանալ արժանի արասցէ։ Եւ
որ 'ի փայտէն դայթակղութիւնն
եղև 'ի դրախտին, 'ի մէջ միջնաժո-
ղով ժողովրդոց զնաչն կանգնեաց
փայտ առ փայտ և ծառ առ ծառ,
և զպտուղն կենաց փոխանակ ապա-
կանաբեր պտղոյն զկենդանաբեր
փայտէն կախեաց, կամօք կամա-
կարութեամբ և ոչ ակամայ, կամօք
զանձն մատնեաց, ինքն զինքն էդ, և
անդրէն ինքն զինքն իւր յանձն ըն-
կալաւ, զսուրբ մարմինն և զպա-
տուական արիւնն պաշար կենաց,
մեզ ողբ ճշմարտութեամբ հաւատա-
ցացաք, յաշխիճանաւոր ճանա-
պարհն որ յերկինսն է՝ սիրելեաց
իւրոց պատրաստեաց։

Այլ վասն դատապարտ և անօ-
դուտ՝ մանաւանդ վասն նեղվեալ
մոլորութեան նոցա, զի պարտ ըզ-
բաղում բանիւք անկանել, և զսուրբ
ազատութեանն լսելիս, զանարատ
մոտց հաստատութիւն մեզ իշխել
աղաչել. զի որ միանգամ մոլորա-
կան եղեն 'ի ճշմարտութեան ճա-

նապարհէն և յուղիղ հաւատոցն վրիպեալ ընկեցան, այլ զինչ խորհիցին կամ զինչ խօսիցին, թէ ոչ որ 'ի հուր գեհենին պատրաստեալ հատուցումն նոցա է. զի մեք ասա որ զայնպիսի իշխեն յանձն առնուլ, և կամ ուրեք ուրեք, 'ի տեղիս դատանիցի՝ խորհել կամ խօսել ոչ միայն չընդունիմք կամ հաւանիմք, այլ բաղում և մեծամեծ պատիժ պատուհասի առնել ոչ դանդաղիմք։ Ո՞րչափ ևս առաւել պարտ և պատշաճ է ձեզ՝ որ 'ի մեծամեծ իշխանութիւնդ վայելէք նախանձել զնախանձն Աստուծոյ, և 'ի դլուխս վարել զայնպիսի նախանձու վրիժուց հատուցմունս, և ոգով և մարմնով ջանալ զի բարձցին 'ի միջոյ եկեղեցւոյ Քրիստոսի անուանարկ անօրէն ամբարշտութիւնք, դայթակղութիւնք։ Մանաւանդ զի թագաւորս ունիք որ զհոգ Աստուծոյ յանձին բարձրեալ բերին, և հաւատարութիւնն Երրորդութեանն սրտի մտօք ընդանեցուցեալ են, կարողին զփուշն 'ի միջոյ սրբել, զի բոյսն

սուրբ սերմանեաց հաւատոյն բար-
ձրացեալ ծաղկալից պարարտացեալ
արմատացն քաղցրութեամբ զան-
կեալ զհատն սերմանողացն մար-
թացէ, և ուրախ արացէ զտէրն
արդիւնարարաց և զմշակն արդարա-
պէս հատուցման պարգևաց արժա-
նի արացէ։ Զի եթէ որ երկրաւոր
թագաւորաց սպասաւորք լցեն՝
դուշնաքեայ ինչ բանք մանաւանդ
որ վասն ծիրանեաց լինիցի, ոչ
յանձն առնուն դատարկացեալ, թէ
ոչ մեծապէս պատիւ պատուհա-
սիւ մեծապէս վրէժ խնդրեսցեն,
որչափ ևս առաւել պարտ և պատ-
շաճ է, որ զանեղծ և զանարատ հա-
ւատն յապականութիւն դարձուցա-
նել ջանան, և որ անհատն է՝ հատանե-
լի ճանապարհին, և յաւիտենական
լուսոյն դեր 'ի վերոյ լինել յօժա-
րին, և սրբոյ զանճառ զանքնին Երը-
րորդութեանն քննութիւն՝ ջանան
ընդ խնդիր արկանել, առաւել ևս
նոցա ընդունել պատիժս պատու-
հասի ըստ իւրեանց խորհրդոց, զի
սրբութիւն Երրորդութեանն, ան-

մատոյց հրեշտակաց և անեղեալի քերովբէից, լսելով միայն փառաւորութեամբ և օրհնութեամբ պաշտի։

Արդ տէր մեր և Աշխարհիս աստուածասէր հայր մեր, և ամենայն եկեղեցւոյ Աստուծոյ ընդունելի, և 'ի սուրբ աղօթս քոյ յիշել զմեզ հանապազ անդարշ լինիցիս և ըզմեր տկարութիւնս զօրացուցեալ մի՛ դանդաղիցիս, և եթէ ինչ զչափ թղթոյդ առ ոգիութիւն վրիպեալ իցէ՝ ուղիղ անդարշ լինիցիս։ Եւ որ Դիոդորեայ Մասիսորացւոյ աշակերտեալք իցեն, առ ժամանակս 'ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ չև է յայտնեալ, ապա թէ իցէ ժամանակեալ 'ի ժանգոյ աղտեղութեան 'ի հարկէ ջան լիցի մեզ խզել զնոսա, և զդայթակղութիւն զայն 'ի միջոյ 'ի բաց կորուսանել, զի միաբանութիւն որպէս ձերում 'ի միջի փառաբանի, և ըզմեզ 'ի հաւատարութիւն փառաւորութեամբ առ Աստուած հասուցանել արժանի արասցէ։ Ամենայն ուխտի

որ ընդ ձեռով սրբութեամբ են՝ մեք և եղբարք որ ընդ մեզ են՝ ողջունի թղթովդ աղաղակեմք, զի աղօթիցէք 'ի վերայ եղբայրութեանս հաստատակաց։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՏԵԱՌՆ ՍԱՀԱԿԱՑ

Թղթոյն Ակակայ.

Առ Ճշմարիտ և տատուածասէր տէր մեր տուրբ եպիսկոպոս Ակակ 'ի Սահակայ 'ի տէր ողջոյն։

Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցաւ 'ի ձեր լուսաբեր արքութենէդ, յոյժ 'ի ծաղէն իւրեանց զօրացուցին զմեր տկարութիւս, և զնուազ խորհուրդս մեր աճեցուցին, զոր օրինակ տապ ինչ ջերմագին յանխառն օդոց հասեալ 'ի բոյսս ապտոց, և զկնի նորա ցօղ քաղցրութեան հասեալ փութով յառաջութիւն դարձուցանէ, այնպէս գեղեցիկ իմն ցանկալի և

ուխտիւք խնդրելի էր մեզ լսել զե-
ղանելի պատգամն 'ի ձէնջ առ մեզ
հասեալ, մեր աղօթք հանապազորդ
էին արժանի լինել յամենայնի ըն-
դունել և վայելել յօրհնութիւնսդ
հոգևորս, ձերոյ մեծապանջ սրբու-
թեանդ, զի քաղցրացեալ էր մեզ
կալ մնալ սատէն 'ի սմին յընդա-
նացեալ տգիտութեան խբրև բերդ-
ինչ ամուր փախստեայ անկեալ
յանգիտութեանս։ Արդ պահպա-
նութիւն զմեօք առեալ զօգնակա-
նութիւն աղօթից ձերոց, պահել
զհաւատն Ճշմարտութե՛ որ 'ի ձեր
'ի սուրբ վարդապետութենէդ ու-
նէաք, և անպղտոր լեալ տգիտու-
թիւն և պարզմտութիւնս մեր մա-
նաւանդ 'ի նորաբան հրէութեանցն
զոր այլանդակքն տակաւին զբոյս
դառնութեան և աղտեղութեան
սերմանեացն յուցին և ցանեցին 'ի
վերայ սուրբ սերմն զորոմնախառն
ուսմունսն, որ 'ի հանճարաքնա-
սատանայէ խառնման ուսեալ սովո-
րեալ են։ Արդ որոմհեռև մոլարն
առաջին դլխաւորքն չափ զիւր

ժանգ աղտեղութեանն սերմանել ժպրհեցաւ , զայդ մերոյ մեզացն գործ համարեցաք և յոյժ ձերում թղթոյդ տրամակից եղեալ , ոչ բացաք . և ընդ բնաւ տեղիս մերոյ նահանգիս մեծաւ պատուհասալից պատուիրանաւ արձակեցաք 'ի լինել ամենևին այնպիսի բարբարոսացն մի ընդունել զչար հերետիկութեանն բարբաջանս . բայց ես զարմացեալ ընդ այնոսիկ որ աւելի քան զօրինայն չափն չանան և նկրտին ըմբռնել զանըմբռնելին . այլ կարծեմք զայնպիսեացն չգիտել ամենևին ըստ դիրս և զզօրութիւն նորին . բայց եթէ հրէարէն միայն զմուրն նկատեցեն , և իբրև գոլացեալ ինն համարիցեմք զմիտս նոցա 'ի թշնամւոյն և ախտացեալ 'ի չար հիւանդութիւն արբեալ 'ի թանձր արբեցութենէ , և զգայութիւնս ճաշակացն թարշամեցուցեալ չկարէ առնուլ զհամ դինոյն , և 'ի սաստիկ կիզմանէ ընկղմին միաքն 'ի թմբիրն խելագարութեան թէ զոր տարտարոս դիտութիւն բաղում ուսման 'ի սա-

տանայութիւն զառաջէ, որ հաստատել անհաս չափոյն ժպրհին, քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաբապայեղց, քան երկուս որդիս կամ երկուս տեարս անուանել'ի Յիսուս. աներկիւղաբար անամօթաբար զլրբութիւնն իւրեանց յայտնապէս պատմեն, այլ զի խցցին անամօթ բերանքն անօրէնութեամբ սրեալ լեզուքն։

Ճշմարիտ մարմնացաւ բանն առ'ի նորոգել միւսանգամ մարմնով շնչով և ոգւով զմարդն հնացեալ զապականեալն 'ի մեղաց, և զի 'ի փայտէ դայթակղութիւն եղև և մահ, փայտ կենաց առ փայտն կանգնեաց, և ծառ առ ծառն բարձրացոյց, պտուղ կենդանարար փոխանակ այնր մահածին պտղոյն պարգևէր. ինքն զինքն եդ, և ինքն զինքն անդրէն յանձն իւր ընկալաւ զսուրբ մարմինն և զպատուական արիւնն, պաշար կենաց մեզ հաւատացելոցս յաշխիճանաւոր Ճանապարհն պատրաստեաց. և արդ որ միանգամ յայն 'ի Ճանապարհէ և յուղիղ հա-

ւատոյն վրիպեցան, հուր դեհենին պատրաստեալ պահի նոցա. և մեք ասա եթէ յանկարծ յայնպիսեացն դատուք, ոչ միայն ջնդունիմք կամ հալածականս առնեմք, այլ և ընդ մեծ պատժովք արկանել ոչ դանդողիմք։ Ո՞րչափ ևս պարտ է ձեզ որ 'ի մեծամեծ խշնամութեանդ վայելէք նախանձել զնախանձն Աստուծոյ, և մարմնով և հոգւով ջանալ բառնալ 'ի միջոյ զնոսդ եկեղեցւոյ Քրիստոսի. մանաւանդ զի թագաւոր ունիք, որ զհոգ Աստուծոյ յանձինս խրատանց բարձեալ բերիցեն, կարող են զնոսդ 'ի միջոյ խլել, և զբոյս սերմանց հաւատոցն պարարտացեալ արմտեացն քաղցրութիւն զանկեալ հասին սերմանողաց նմա մատուցէ, առաքացեալ բազմապատիկ զբերրն զպտուղն հատուցէ, և ուրախ արասցէ զտէրն արդիւնարարաց, և զմշակին առատապէս պարգևաց արժանի արասցէ. զի թէ որ երկրաւոր թագաւորաց սպասաւորք լիցեն, և դուշնաքեայ ինչ բանք մանաւանդ որ վասն

ծիրանեաց լինին, ոչ յանձն առ-
նուն դատարկ անցուցանել եթէ ոչ
մեծապէս պատուհասիւ զվրէժն
խնդրեցեն, ուրչափ ևս պարտ է որ
զանեղծ և զանարատ հաւատն յա-
պականութիւն դարձուցանեն և
յանհան հասանել ժպրհին և մըշ-
տընջենաւոր լուսոյն գեր 'ի վերոյ
լինել յօժարեն, զանքնին Երրորդ-
դութեանն քննութիւն չանան ընդ-
խնդիր արկանել, պարտ և պատ-
շաճ է առաւել ևս նոցա ընդունել
պատիժս պատուհասի. քանզի սրբ-
բութիւն Երրորդութեանն անմա-
տոյց հրեշտակաց և աներևոյթ քրով-
բէից և սրովբէից՝ լոկով միայն փա-
ռաւորութեամբ և օրհնութեամբ
միայն պաշտի։ Արդ, տէր մեր և
հայր, յընդունելի և 'ի սուրբ ա-
ղօթս քո յիշել անգարշ լինիցիր. և
եթէ ինչ ըստ չափոյ թղթոյդ առ
տգիտութեանս վրիպեալ իցէ՝ ուղ-
ղել կամեսցիր, և զսկարութիւնս զօ-
րացուցանել մի դանդաղեսցիս. այլ
յաղանդոյն որ գրեցեր զատչել՝ առ
ժամանակս 'ի շնորհս Աստուծոյ այն-

ոչիսի ինչ չև է հասեալ. ապա եթէ
եցէ ինչ ծածկեալ 'ի ժանդոյ անտի՝
'ի հարկէ ջան լեցի խլեալ զևառչն 'ի
միջոյ, զի միաբանութեամբ փառա-
ւորեսցուք զՔրիստոս * :

* Թէ ընդէ՞ր զթուղթքս գրեցին Սահակ և Մեսրոպ՝ առ Պրոկղ և առ Ակակ եպիսկոպոս Մելտինենցւոց, գտցեն խնդրողք 'ի գիրս Պատմ. Հայոց. Հատ. Ա. ՃՀՅ։

Թուղթ Սահակայ առ Թեոդոս *.

Խաղաղասիրի կայսեր տեառն իմում Աւգոստոս Թէոդոսի՝ Սահակ Հայոց եպիսկոպոս 'ի Տէր ինդալ։

Գիտեմ, զի համբաւ նեղութեանս մերոյ հասեալ է 'ի ներող լսողութիւն ինքնակալիդ. սակս որոյ յուսալով 'ի դթածութիւն բարերարութեանդ քոյ, դիմեալ ապաւինեցայ յոտս ձեր, և ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վնճակիս 'ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ, մինչեւ զնշանագիրս անգամ ոչ ընկալան, զորս եբեր նոյն այր՝ զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ դորա յԱսորւոց աշխարհին։ Արդ հաճոյ թուիցի տէրութեանդ ձերում՝ ոչ

* Ի Պատմութեան գրոց Մովս. Խորենացւոյ։

*

անիշխան առնել զմեզ 'ի մերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր. Ողջ լեր։

Թուղթ Սահակայ առ Աստիկոս.

Սահակ եպիսկոպոս Հայոց, վարդապետս մեր Աստիկոս եպիսկոպոս աշխարհամուտ դրանդ, օրհնութեամբ ողջոյն։

Յուսացեալ 'ի ձեր սրբութիւնդ առաքեցի զուսուցող մերոյ աշխարհիս Մեսրոպ, և զթոռն իմ Վարդան, որպէս զի 'ի լսել քո 'ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխօսեալ առ մեծի Թագաւորիդ՝ օգնեսցես մեզ, որպէս արդարեւ եղբայր սիրելի. Ողջ լեր։

Թուղթ Սահակայ առ Անատոլիս.

Սահակ եպիսկոպոս Հայոց, քաջի զօրավարի Անատոլեայ խնդալ։

Շնորհ ունիմ Աստուծոյ յաղագս զքեզ պատրաստել մեզ յապաւի-

նութիւն. վասն որոյ զդացուցա-
նեմ՝ զի 'ի հայթայթանս մերոյ նե-
ղութեանս առաքեցի զուսուցա-
նողդ մեր զՄեսրոպ, և զթոռն իմ
Վարդան 'ի դուռն արքունի. և ա-
ղաչեմ զքո քաջութիւնդ ձեռն-
տու լինել ճանապարհիդ. Ողջ լեր։

Ց Ա Ն Կ

Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպ Լբայ վարդապետին . 5
Տեսիլ սրբոյն Սահակայ . 45
Կանոնք սրբոյն Սահակայ յաղագս եպիսկոպոսաց թէ ո՞րպէս պարտ է ունել զընտանիս սուրբ եկեղեցւոյ . 71
Նորին յաղագս քորեպիսկոպոսաց թէ ո՞րպէս պարտ է զկանոնական զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս Աստուծոյ . 80
Նորին կարգ քահանայից առ ժողովրդականս , և նոցին ժողովրդականաց հնազանդութիւն և կարգ ուղղութեան առ քահանայս . 88

Նորին սրբոյն Սահակայ թէ ո՞րպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց. 100
Յիշատակարան դրչի. 115
Նորին թէ ո՞րպէս պարտ է եպիսկոպոսաց պահել ըզ-գանձս եկեղեցւոյ, կամ որոց ո՞րպէս մատակարարել. 117
Նորին գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւո-ցաց սրբոյ Եկեղեցւոյ, և պտղոյ ժողովրդականաց ընծայելոց՝ի տուն Աստուծոյ. 127
Թուղթք սրբոյն Սահակայ. — Պատասխանի թղթոյն Պրոկղի՝ի Սահակայ և Մաշտոցէ սուրբ վարդապետացն Հայոց. 135
Պատասխանի տեառն Սահակայ թղթոյն Ակակայ. 148
Թուղթ Սահակայ առ Թէոդոս. 157
Թուղթ Սահակայ առ Ատտիկոս. 158
Թուղթ Սահակայ առ Անատոլիս. 158

Հայկական Սոխակաց

Հատոր Երկրորդ

0015200

2013

2001